Lin
2236

1999

ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ

ԿՕՄԵԴԻԱ

Առաջին անգամ հանրայայտած է հայ հրատարակչաց խումբը Թիֆլիսի ատրպետնոյն Լարդրոնում՝ 1881 թուի Դեկտեմբերի 10-ին։

ԼՔՕՓ
ԳՐԱԳԱՐԱՆ

ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ

ԿՕՄԵԴԻԱ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆԻ

Հարիկ Ծղկի

ԼՔՕՔ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
ՀՍՍՌ-ի ԳԱ. ՍՍՌ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

/109/

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1|2
1885

42236-ԿՈ

ՀՄ 2240

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Іюля 1885 г.

Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., д. 1/2

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼԵԱՆՑ, *հարուստ վաճառական։*

ՍՈՖԻԱ, *սորա աղջիկը։*

ՍԻՄԷՈՆ ԱԹՈՅԵԱՆՑ, *աստիճանաւոր ծառայութիւնից դուրս եկած։*

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, *սորա որդին, վաստակաւոր։*

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, *բժիշկ։*

ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ, *Սոֆիայի բարեկամ աղջիկ։*

ԾԱՌԱՅ, *Գուլեանցի տանը։*

Անցքը պատահում է վերջին Ռուս-Տաճկական պատերազմից յետոյ, Գուլեանցի տանը, Թիֆլիսում։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Գուլեանցի տան առաջ մի փոքրիկ պարտէզ՝ ծաղկանոցներով եւ տեղ տեղ նստարաններով. ծախ *) կողմից երեւում է տան շէնքը, որ բեմի առաջնակողմում ունի դարատափ (տերրաս). այստեղից մի դռնով կայ մուտք տան մէջ, իսկ մի քանի աստիճաններով կարելի է իջնել պարտէզ։ Տան շէնքի ետեւից կայ էլի մուտք բակի մէջ։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, յետոյ ԳՈՒԼԵԱՆՑ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, դո՜ւռ է գալիս դարպասը։

Այստեղ էլ չեն... Ասացին պարտիզումն են։ (Իջնում է անդրադարձնելով պարտէզը։) Տեսնենք... (Պարպելով խորտիկ երեսում է Գուլեանցը։)

ԳՈՒԼԵԱՆՑ, նկատելով Ջանումեանցին։

Ա՜... պարոն դոքտոր... (ասում է գալիս։) Շատ ուրախ եմ ձեզ տեսնել... Երևի շատ ժամանակ է այստեղ էք եւ մենակ...

*) Աջ, ձախ պէտք է ընդունել Հանդիսականների դիրքից նայելով։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այս բոպէիս միայն եկայ... Ֆառան ինձ այստեղ ուղարկեց... Ի՞նչպէս էք տնով—տեղով... Վաղուց է ձեզ հարցնելու չեմ եկած...

ԳՈՒԼԵԱՆՑ

Գոհութիւն Աստուծոյ ապրում ենք... Է՜հ... դուք ո՞ւր էիք այսքան ժամանակ... Կարծեցինք քաղաքում չէք... Մի շաբաթ է չէք հարցրել մեզ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Գիտէի որ ձեր տանը ողջ ու առողջութիւն է տիրում, այդ պատճառով չէի գալիս... Մէկ էլ որ բժշկի այցելութիւնը տան համար մի մեծ բաղդ չէ... (ծպտում է։)

ԳՈՒԼԵԱՆՑ, ծպտալով։

Է՜հ... այդ խօսքը մեզ համար չէ. դուք մեր տանու բժիշկն էք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ճշմարիտ է... Ես այս քանի օրերս զբաղուած էի։

ԳՈՒԼԵԱՆՑ

Այդպէս ասացէք... Այդ հասկանալի է... Հա՜... Է՞լի աղգային գործեր...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծպտալով։

Համարեա՛ թէ...

ԳՈՒԼԵԱՆՑ, ծպտալով։

Է՞լի Վասպուրականի հայեր, սովատանջ եղբայրներ, Միացեալ ընկերութիւն, Ներսէս պատրիարք, Խրիմեան հայրիկ, հայկական խնդիր, հա՜... (նոյնն է։)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծպտալով։

Թէ՛ այդ և թէ՛ շատ ուրիշ բաներ։

ԳՈՒԼԵԱՆՑ, գլուխը շարժելով։

Է՜հ, էհ... զարմանալի մարդ էք եղել... կարծես այստեղ, Թիֆլիսում, քիչ կան խեղճ ու սոված մարդիկ, որ դրսի ժողովրդի համար էք աշխատում։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծպտալով։

Այստեղ ուրիշ է, պարոն Գրիգոր։

ԳՈՒԼԵԱՆՑ

Այնտեղ՝ քուրդ բարբարոս, տաճիկ հարկահան, հա՜...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծպտալով։

Մօտաւորապէս...

ԳՈՒԼԵԱՆՑ, ծանր։

Ոչ, պարոն դօքտոր, վաղուց կ՚ուզէի ասել, այժմ տեղն եկաւ... Դուք լաւ չէք անում, որ ձեր երկրացու համար չէք մտածում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, շտապով։

Մեր երկրացու համա՞ր...

ԳՈՒԼԵԱՆՑ

Հա՛, մեր երկրացու համար... Ես հանաք չեմ անում... Մէկ նայեցէք ձեր չորս կողմը, տեսէք թէ ինչ ժամանակի ենք հասել՝ շատ չի անցնիլ և մեր գոված Թիֆլիսն աղքատանոց կը դառնայ, տեսնենք այն ժամանակ տաճկաստանցի հայն կ՚օգնէ Թիֆլիսցուն։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Պարոն Գրիգոր, դուք շատ բարի էք... Բայց գիտէք որ այստեղ հայն համեմատաբար լաւ կեանք է վարում... Ի՞նչ էք կարծում, եթէ այս վերջին ժամանակս մենք դրանց չէինք օգնել, գիտէք թէ ինչ

կը լինէր նրանց դրութիւնը... Հաւատացած եղէք որ նրանք սովից ու հիւանդութիւնից կը կոտորուէին։

ԳՈՒԼԵԱՆՑ

Դուք էլ այդ սովի պոչից բռնած ժողովրդից փող էք ուզում... Մէկ տեսէք թէ ինքը կուշտ է, բաւական է իրա վիճակից...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մինչև այժմ անտրտունջ տանում է այդ ծախսերին, և յոյս ունիմ, որ այսուհետև էլ այդ ծանր բան չի լինիլ նրա համար...

ԳՈՒԼԵԱՆՑ

Հա՛, չէ տրտնջում... Բայց մի՛թէ այդպէս են ամէնքը... Ոչ, պարոն դօքտոր, թող ձեզ յայտնի լինի որ նրանք իրանց վերջին կոպէկը կէս են անում նրանց համար։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ պատիւ է բերում նրանց սրտին։

ԳՈՒԼԵԱՆՑ, նեղացած։

Պատի՞ւ... Ահա՛, այսպէս էք մեր այժմեան երիտասարդներդ, որ քաղցր խօսքերով շտկում էք ձեր ճանապարհը։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դուք ուր էք նեղանում՝ տուողը տալիս է և շատ սիրով, մանաւանդ ձեզ պէս անձինք...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ասացի՞ էլ... ախր ես գիտեմ ձեր բռնած ճանապարհը։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ձեր մասին ես հաւատացած եմ... Ձի՞ որ դուք

խօսք էք տուել այդ գործի համար փող չը խնայել...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո՛... Ասել եմ՝ իմ աղջկան շնորհիւ... Բայց ինձպէս մարդիկ շատ կան Թիֆլիսում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, վեր կենալով։

Ա՛.. ա՛... ա՛.. ուրեմն ստիպողական է ձեր մասնակցութիւնը...

ԳՈՒԼԵԱՆՑ, դէ հոգ։

Արի՛ ու սրան ասա՛ թէ ստիպողական է, մի մատ մեղր կը շինէ քաղաքում։ (Բարձր) Այդ թողնենք... խօսքն իմ վրայ չէ, ես էլի կը տամ... Իմ ասելիքն այն է որ մեր երկրից այսքան փող որ դուրս է գնում Տաճկաստանի հայերի համար, մարդ ասէ, ինչ է արդեօք դրա հետևանքը...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Հետևանքն աշկարայ է...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ես չեմ տեսնում... Բայց եթէ այդ փողը մնար մեզ մօտ, ով գիտէ մեր ժողովրդին աւելի օգուտ բերէր։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ փողն էլ շռայլութեամբ կը ծախսուէր և նրանց էլ օգուտ չէր լինիլ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի հարկէ օգուտ չէր լինիլ, քանի որ մեր ժողովրդի համար մտածող և աշխատող մարդ չկայ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մե՞ր ժողովրդի համար... Համեցէք... (Ծոյկ հանում է գրպանից ու նրան տալիս է Բէրբէ։)

ԳՈՒԼԵԱՆՑ, ԼՂԼԼԵԼ ՀԵՌՈՒԷՆ ԽՈՍԵԼՈՎ։

Այդ ինչ է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ստորագրութեան թերթ...

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՔԱ, ՍՈՖԻԱ։

ՍՈՖԻԱ, վերջին խօսքերը լսած՝ մանրամասն պարտիզի խորքից՝ յետոյն ծաղիկներ քաղած։

Ստորագրութեան թերթ։ (Զարմանքով նայում է ծաղիկները հիշը սեղանի վերայ և մօտենում է Ջանումեանցին։) Յօդուտ ինչ բանի, բարև ձեզ, պարոն Ջանումեանց։ (Սեղմում է նորա յետոյը։)

ԳՈՒԼԵԱՆՑ, մի կողմ։

Սա էր պակաս...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, սեղմելով յետոյը։

Բարև, օրիորդ... Յօդուտ Թիֆլիսի աղքատների հիւանդանոցի։

ՍՈՖԻԱ

Ահա... Վերջապէս գլուխ բերիք այդ գործը։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Գլուխ բերելու համար դեռ շատ բան է պակաս...

ՍՈՖԻԱ

Փոզը... Պապա, ստորագրիր այդ թերթին՝ շատ լաւ և բարի գործ է։ (Նստում է սեղանի առաջ և ծաղիկներից փունջ է շինում։)

ԳՈՒԼԵԱՆՑ, ծպտալով։

Հոմ գիտես, որդի, որ առանց ինձ գործը գլուխ չի գալ... Տուէք ինձ այդ թերթը։ (Թերթը բաց է անում։) Բայց այստեղ միայն դուք էք ստորագրել, պարոն դօքտոր։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծպտալով։

Դեռ առաջ ես ինձ եմ ճանաչել, յետոյ ձեզ. ուրեմն հերթը ձերն է ստորագրելու...

ԳՈՒԼԵԱՆՑ, մի կողմ։

Տես թէ ուր է խփում։ (Բարձր) Աչքիս վրայ. ես էլ կ'ստորագրեմ... թէ կուզէք ուղարկեցէք մեր քարվանսարայ, այնտեղ շատ մարդկանց էլ ստորագրել կը տամ։

ՍՈՖԻԱ

Բրավո՛, պապա, գիտէի որ այդպէս կասէիր. շատ ուրախ եմ, երբ բարի գործը քեզանով է սկսվում...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ես էլ շատ ուրախ եմ, եթէ դրանով քեզ բաւականութիւն եմ պատճառում։ (Ինչու

ՍՈՖԻԱ

Պապա... պարոն դոքտորի հետ ես այժմ գործ ունիմ։

ԳՈՒԼԵԱՆՑ, (դեռ-ելով Սոֆիայէն։)

Գո՞րծ... ի՞նչ գործ...

ՍՈՖԻԱ, ծպտելով

Գործ ունիմ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Էլի ազգի բան կը լինի... Ուրեմն, պարոն դոքտոր, դուք այստեղ մնում էք... իսկ ես այս թերթը հետս կը տանեմ ու կը ստորագրեմ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Շատ շնորհակալ եմ։

ԳՈՒԼԵԱՆՑ, գնալով դեպի սանդուղքները։

Յուսով եմ ձեզ էլի այստեղ տեսնել...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես կը մնամ։

ԳՈՒԼԵԱՆՑ, մի քիչ։

Էլ ի՞նչ կերթայ, մինչև չը ստորագրեմ... Ա՜խ, Աստուած, Աստուած, ի՞նչ ժամանակի հանդիպեցանք։ (Գլուխը շարժելով, դուրս է գնում դարպասից։)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ՋԱՆՈՒՄԵԱՆՑ։

ՍՈՖԻԱ, ոտքի ելնելով ի՞նչ մնաց։

Նստեցէք այստեղ, մէկ պատմեցէք թէ ինչպէս գլուխ բերիք հիւանդանոցի գործը։ Ձեր մի շաբաթուայ բացակայութիւնը երևի դորա համար էր։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, նստելով Սոֆիայի հանդէպ։

Հեշտ չէ Թիֆլիսում այդ տեսակ բաներ իրագործել... Հարկաւոր էր մի քանի անձանց տեսնել, նոցա հետ խորհրդակցել. վերջապէս պէտք էր կառավարութեան պաշտօնական անձանց հետ խօսել, նոցա կարծիքն իմանալ թէ իրաւունք և թոյլտուութիւն կը տա՞ն այդ հաստատութիւնը հիմնելու համար, թէ ոչ։

ՍՈՖԻԱ

Ի՞նչ դժուար բան է եղել մի հասարակ օգտաւէտ գործ գլուխ բերելու աշխատութիւնը։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ահա՛, այժմ բանը ստորագրութեան վերայ է մնացել...

ՍՈՖԻԱ

Չը լինի՝ այդ բանը պատճառ բերելով գործը կիսատ թողնէք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մի՛ վախենաք, թէև սկսելը գործի կէսն է, այնու ամենայնիւ կ'աշխատեմ գլուխ բերել... բայց դուք ինձ պէտք է օգնէք ստորագրութեան գործում, թէև փորձով գիտէք թէ ի՞նչ բան է ստորագրութեամբը փող ժողովել...

ՍՈՖԻԱ

Ես էլ, հայրս էլ կ'օգնենք ձեզ, միայն թէ գործը գլուխ գայ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո՛, յոյսս մեծ է... Բայց ձեր հայրը, թէև

ճշմարիտ է, համաձայնեցաւ, կարծես փոքր ինչ տհաճութեամբ։

ՍՈՖԻԱ

Ոչ, դուք հօրս մի՛ նախատիք, նա միշտ պատրաստ է մասնակցել հասարակական գործերին։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ձեր շնորհիւ, օրիորդ...

ՍՈՖԻԱ

Ձատ սխալվում էք։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ինքը խոստովանեցաւ ինձ այս բոպէիս...

ՍՈՖԻԱ, աչքերը խոնարհեցնելով։

Նա գթասիրտ է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ձեմ կասկածում... (Փոքր լռութիւնից յետոյ ուրախ։) Օրիորդ, ես մի բան ունիմ ձեզ հաղորդելու...

ՍՈՖԻԱ, այլայլած։

Ի՞նչ բան...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մի շատ ուրախալի լուր։

ՍՈՖԻԱ, հանդարտ։

Ես էլ մի լուր պէտք է հաղորդեմ. առաջ դուք ասացէք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ Բերոյեանցն այս օրերս գալու է Թիֆլիս։

ՍՈՖԻԱ

Այդ լուրն ես էի ուզում ձեզ հաղորդել...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ուրեմն դո՞ւք էլ գիտէք...

ՍՈՖԻԱ

Այո։ Անցեալ օրը նորանից հեռագիր ստացայ, թոյլտուութիւն էր խնդրում մեր տանը վէր գալու... Իսկ դուք որտեղից իմացաք նորա գալու մասին։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Իւր նամակից։

ՍՈՖԻԱ

Ո՞ւմ էր ուղղուած այդ նամակը։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ինձ։

ՍՈՖԻԱ

Ձեզ... Ի՞նչ է գրում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Իւր գիտաւորութիւնը՝ քննութիւններից յետոյ գալ Թիֆլիս։

ՍՈՖԻԱ, հեգնօրէն։

Դուք էլ իբրև նորա մենտոր և խնամակալ, 'ի հարկէ, իրաւունք տուիք գալու։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ Բերոյեանցն այնքան պարզամիտ չէ, որ գալու մասին ինձանից իրաւունք կամ թոյլտուութիւն խնդրէր։

ՍՈՖԻԱ

Ինչու չէ... նա երախտապարտ է ձեզ... նա ամէն քայլափոխում պէտք է խորհրդակցէ ձեզ հետ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Նա այնքան է ինձ երախտապարտ, որքան և՛ ձեզ... Դուք շատ վատ կարծիք էք կազմել, օրիորդ, բարեկամիդ մասին։ Օրիորդ Բերոյեանցն իւր ամբողջ

կեանքում անկախ է եղել. իսկ դուք այժմ կամենում էք փաթաթել նորա վզին մի այնպիսի ծանր բեռն, ինչպէս է կախումն ունենալ մի մարդուց:

ՍՈՖԻԱ, հեգնօրէն, շեշտելով:

Մի մարդո՞ւ... Ոչ, պարոն Ջանումեանց, դուք նորա համար հասարակ մարդ չէք.. դուք նորա բարերարն եք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ինչպէս և դուք էք եղել... Իսկ այժմ, երբ նա կանգնած է որոշեալ ճանապարհի վերայ, ազատ է:

ՍՈՖԻԱ

Ի՞նչու էք ինձ վերաբերում այն, ինչ որ դուք էք արել նորա համար... Ձեր ասած ճանապարհն էլ դուք էք նորա համար որոշել. ուրեմն նա ձեր պարտականութիւնից չը պէտք է դուրս գայ յաւիտեանս...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Յաւիտե՞անս... Օրիորդ, իմ կողմից այդ կը լինէր վերին աստիճանի ինքնասիրութիւն: Հաւատացած եղէք, որ եթէ ես մի գործ եմ կատարում, կամ մէկին լաւութիւն եմ անում, իմ անձնական հաշուի համար չեմ անում... Եթէ կարծում էք որ օրիորդ Բերոյեանցը պէտք է երախտապարտ դտնուի իմ առաջ, այդ կը լինի նորա զգացմանց արտայայտութիւնը, իսկ եթէ ոչ, այդ էլ նորա կամքն է: Ես նորանից այդ չեմ պահանջում և իրաւունք էլ չունիմ...

ՍՈՖԻԱ, մի կողմ:

Մեղանչում է... (Բարձր) Իսկ այն նամակները, որ ես ստանում եմ նորանից, ձեր մասին այդ չեն

ասում: Այդ նամակներին համաձայն՝ ոչ թէ միայն երախտապարտ է ձեզ, այլ աւելի ևս:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ պատիւ է բերում նորա սրտին:

ՍՈՖԻԱ, մի կողմ:

Կեղծաւորում է... (Բարձր) Ցնորենք... Նա շուտով գալու է և դուք միջոց կունենաք նորա հետ շուտ շուտ տեսակցել այստեղ, որովհետև հայրս իրաւունք տուաւ ինձ մեր տանը հիւրասիրելու նորան. այս մտքով էլ նորան հեռագիր քաշեցի...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, մի կողմ:

Օրիորդը կասկածում է. այս լաւ նշան է... (Բարձր, վեր կենալով:) Այո, շատ հետաքրքրելի է տեսնել նորան երկամեայ բացակայութիւնից յետոյ:

ՍՈՖԻԱ

Դուք գնում էք, պարոն Ջանումեանց:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, մոլեռում է բարկանալու:

Այո, հարկաւոր գործ ունեմ...

ՍՈՖԻԱ, վեր կենալով:

Իսկ ստորագրութեան թերթը... հօրս խոստացաք ստացել...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Թերթը ձեզ եմ յանձնում...

ՍՈՖԻԱ

Բայց ես գործ ունէի ձեզ մօտ... Ա՜խ... քիչ էր մնում մոռանում էի... դնացէք, խնդրեմ. տեսէք իմ ադախնին. երկու օր է դանդատվում է կրծքի ցաւից...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ԽՈՅԵԼՎԼ ԺՈՄՈՊՈՒՆԻՆ։

Ձեմ իմանում, ճշմարիտ, ես այժմ շատ շտապում եմ. Հիւանդանոցի գործը...

ՍՈՖԻԱ

Ձէ՞ որ այդ գործն ինձ յանձնեցիք... Հաւատացած եղէք որ ճշդիւ կը կատարեմ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ մասին ես բոլորովին ապահով եմ. ինձ յայտնի է ձեր անձնուիրութիւնը...

ՍՈՖԻԱ

Դուք իմ մասին մեծ գաղափար էք կազմել. վախենում եմ մի գուցէ սխալուիք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ո՜հ, ոչ... Հաւատացած եմ... (ուրախ է գոչելով։)

ՍՈՖԻԱ

Բայց դուք գնում էք... աղախինս ձեզ սպասում է։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Կարելի է, մինչև վաղը թողնել... ես շտապում եմ...

ՍՈՖԻԱ

Ո՛չ, ոչ, անկարելի է... առանց այդ էլ երկու օր է խաբխաբում եմ նորան... վերջապէս եկել էք.. ոչ, հարկաւոր է նորան իսկոյն տեսնել... Համեցէք... (ցոյց է տալիս դէպի դուռները։)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, անորոշաբար հանգնած, մի հոգմ։

Գործ գտաւ ինձ համար... Ի՜նչ արած, պէտք է հնազանդիլ։ (Բարձր) Որտեղ է նա...

ՍՈՖԻԱ

Իւր սենեակումը... (Ճանապարհ է յգոմ Ջանումեանին մինչև դուրսինը, ետը յետ է գալիս։) Բոլորովին անհասկանալի է այս մարդը. ինչ է սորա դիտաւորութիւնը մարդ չի կարող հասկանալ... (ուշադրութեամբ նայելով դուրսինից։) Պապա, ստորագրեցիր թերթին։

ՏԵՍԻԼ ՁՈՐՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՍՈՖԻԱ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Չա՛, ի՞նչ պատահեցաւ.. կասկածում էիր, որ չեմ ստորագրիլ, թէ ինչ է...

ՍՈՖԻԱ, շփոթուած։

Ոչ, նա ինձ յանձնեց ստորագրութեան թերթը։

ԳՈՒԼԵԱՆՑ

Իսկ ինքը փախաւ...

ՍՈՖԻԱ

Ո՛չ... գնաց աղախնիս տեսնելու. նա Հիւանդ է... Պապա, պէտք է անպատճառ նրա խնդիրքը կատարել՝ գլուխ բերել այդ ստորագրութեան գործը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Զարմանալի ես, Սոֆիա, կարծես ժողովրդի դրրպանի տէրը մենք լինինք՝ կը ստորագրուեն՝ կը հաւաքենք փողը. չեն ստորագրուիլ՝ զօրով ոչինչ չի լինիլ...

ՍՈՖԻԱ

Ո՛չ, ոչ, պէտք է աշխատել, եթէ մինչև անգամ զօրի բան դառնայ... մի խօսքով ես նրան խոստացել եմ այդ գործը անպատճառ գլուխ բերել... Հասկանում ես, պապա, անպատճառ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Շատ ծանր յանձնառութիւն ես արել...

ՍՈՖԻԱ

Ինչ և իցէ, պէտք է կատարել...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այդ ապագայի բան է... Դու մէկ ինձ ասա, թէ ինչ գործ ունէիր նրա մօտ, որ չը թողիր հետս գար իմ սենեակը...

ՍՈՖԻԱ

Բօզայի գալու մասին լուր հաղորդեցի...

ԳՈՒԼԵԱՆՑ

Հա՜, զորդ... մոռացայ... նա հոմ սրա որդեգրուհին է... Հա, հա... շատ լաւ միտք է... ապրիս, որդի, ապրիս... գնամ, մէկ ես էլ նրան տեսնեմ...

ՍՈՖԻԱ

Ի՞նչու համար...

ԳՈՒԼԵԱՆՑ

Յետոյ կ'ասեմ... Աֆէրիմ, ջէհել տղայ... բարի ու ազնիւ սիրտ ունի... մեծ, մեծ պատիւ նրան...

ՍՈՖԻԱ

Դու միթէ՞ կասկածում էիր նրա բարի ու ազնիւ սրտի վերայ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ո՛չ, ոչ. Հիմա տեսնում եմ, որ հիմիկուայ մեր երիտասարդների մէջ լաւ լաւ ձգտումներ կան... Մի մի անգամ միայն այնպէս ինձ ու ինձ մտածում էի, թէ ինչ են նշանակում այս բարեգործութիւններն, ազգային ստորագրութիւններն, որ տարին տասներկու ամիս անպակաս են մեզանում... Չէնց որ այսպիսի բան է լոյս ընկնում, ասում են թող Գուլեանցը ստորագրէ...

ՍՈՖԻԱ

Դու էլ ստորագրում ես, և պէտք է միշտ ստորագրես...

ԳՈՒԼԵԱՆՑ

Եւ կը ստորագրեմ... թէև լաւ կը լինէր, որ մի անգամից ինչ առնելու են՝ առնէին ու պրծնէին... Գնամ, գնամ զօքտօրիս տեսնեմ, նրան ուրախացնեմ... Ստորագրութիւն, ազգային բարեգործութիւն, բոլորը, բոլորը նրա համար պատրաստ է...

ՍՈՖԻԱ, *փաթաթուելով նրան։*

Ա՜խ, պապա, որքան ես բաղդաւոր եմ...

ԳՈՒԼԵԱՆՑ, *ծոխորը համբուրելով։*

Ես քեզանից աւելի, որդի... սրտիցս մի ծանր քար ընկաւ... (*Զոռալով դուրս է գնում պարոնի խորքը։*)

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, յետոյ ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՍՈՖԻԱ, ուրախ ուրախ մանգալով։

Հայրս իւր խոստմունքը կը կատարէ. նորա սկսած հիւանդանոցը գլուխ կը գայ, այն ժամանակ... (Ինքն յետոյ լսելի է։ Ուրիշ Բերոյեանցը նեղս է վազում ճանապարհի շրջերով, փոքրիկ պայուսակն ուսին։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, նեղս վազելով։

Սոֆիա...

ՍՈՖԻԱ, ասաջ վազելով։

Բօզա... Ո՞րքան ուրախ եմ։ (Ինքնին գրկում է։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այսպէս շուտով յուսով եմ ինձ չէիր սպասում. բայց եթէ գիտենաս ինչպէս եմ եկել—հասարակ սայլակով։

ՍՈՖԻԱ

Սայլակով, ա՜խ... յետոյ մենա՞կ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Համարեա թէ մենակ... Մի 15 տարեկան երեխայի ուղեկցութեամբ...

ՍՈՖԻԱ

Ա՜խ, Բօզա, Բօզա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ինչ անէի, սիրելիս, համբերութիւնս հատաւ սպասելով, ճանապարհորդակից մարդ չէր գտնվում.. ես էլ բարկացայ և հրամայեցի սայլակ բերել տալ։ Այն

երեխային էլ նստելու ժամանակս յանձնեցին՝ քաղաք բերելու։

ՍՈՖԻԱ, յետոյ բոնած պանում է աջ կողմ և նստում են։

Շափազանց մեծ վստահութիւն է քո կողմից։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այդպէս չէ՞... (ծիծաղում է) Բայց ես սաստիկ ուզում էի քեզ տեսնել... Ի՞նչպէս ես, ինչպէս, Սոֆիա, ա՜խ, որքան կարօտել եմ քեզ... Ա՜խ, Սոֆիա, ի՞նչ տեղեր են, ի՞նչ մարդիկ, հրաշալի՞ է. ահա՜ թէ որտեղ մարդ կարող է գործ տեսնել...

ՍՈՖԻԱ

Դու գոհ ես, շատ ուրախ եմ... իսկ սկզբում ես շատ էի վախենում քեզ համար... անսովոր երկիր, օտար մարդիկ, այլ հանգամանքներ՝ կարող էին քեզ ձանձրացնել և քո սիրտը կոտրել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Բոլորովին ի զուր էր քո երկիւղը։

ՍՈՖԻԱ

Ես չէի միայն վախենում. ինձ հետ և՝ Ջանումեանցը։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ա՜խ, Ջանումեանցն էլ, զարմանում եմ... ի դէպ... որտե՞ղ է նա, ի՞նչպէս է, ի՞նչ է անում...

ՍՈՖԻԱ

Այստեղ է, առողջ է և միջոց կ'ունենաս նորան տեսնելու...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Դարձեալ նոյն անխոնջ գործունեան է։ Վերջին ժամանակ դու ոչինչ չէիր գրում ինձ նորա մասին։

ՍՈՖԻԱ

Իմացայ որ դու նամակագրութիւն ունիս նորա հետ, ես էլ ոչինչ չէի գրում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ե՞ս... նորա հետ... նա, միթէ չես իմանում, որ ծոյլ է նամակ գրելու մէջ... Ամբողջ երկու տարուայ մէջ ընդ ամէնը մի – երկու նամակ է գրել ինձ, այդքան էլ ես նորան։

ՍՈՖԻԱ

Միթէ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես քեզ հաւատացնում եմ... Տեսայ որ նա չէ սիրում գրել նամակ, ես էլ թողի... Ասա, սիրելիս, ինչ է անում այժմ...

ՍՈՖԻԱ

Նոյնն, ինչ որ երէկ, ինչ որ այսօր և ինչ որ վաղը կ'անէ... Այսօր ուսումնարան հիմնելու համար կ'աշխատէ, վաղը հիւանդանոցի համար հոգս կը քաշէ... բայց շուտով կը մոռանայ և ուրիշ բանի մասին կը սկսէ մտածել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Մի ծաղկով գարուն չի գալ... անկարելի է դորան դատապարտել...

ՍՈՖԻԱ

Դու հանձք ես անում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ամենևին...

ՍՈՖԻԱ

Ուրեմն, դու կարծում ես որ բաւական է միայն եթէ մարդ գործել ցանկանայ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Թող դորա չափ ուրիշը գործէ...

ՍՈՖԻԱ

Օհ՛ո, դու ներողամիտ ես դէպի նա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Յոյց տուր ինձ մի ուրիշ մարդ, որ դորանից լաւը լինի։

ՍՈՖԻԱ

Դու նախապաշարուած ես նորանից։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես գնահատում եմ նորան իւր արժանաւորութեան համար։

ՍՈՖԻԱ

Դու նորա թոյլ կողմերը չես ուզում նկատել։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Գործունեայ մարդուն միշտ նախանձում են մարդիկ։

ՍՈՖԻԱ

Օհ՛ո, դու նորան պաշտպանում ես, չէի իմանում... (Ինչպէս երևում է Ջանումեանցը։) Պարոն Ջանումեանց, եկէք, տեսէք ձեր փաստաբանին...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, վազում է Ջանումեանցի մօտ։

Պարոն Ջանումեանց...

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ, ՋԱՆՈՒՄԵԱՆՑ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, նկատելով օր. Բերոյեանցին, տոաջ է քաշում և ետադարձելիս քարկոտում է։

Օրիորդ Բերոյեանց... Որքան ուրախ եմ և բաղդաւոր որ ձեզ տեսնում եմ ողջ և առողջ։ (Ջանումեանց և օր. Բերոյեանց մոտենում են իրար տոաջ։)

ՍՈՖԻԱ, մի կողմ։

Ինչպէս սրտանց հանդիպում են միմեանց...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես ինքս շատ ուրախ եմ, պարոն Ջանումեանց, որ բաղդ ունեցայ ձեզ տեսնելու... Ստացա՞ք նամակս...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո՛ ստացայ... Այսօր ուզում էի ուրախացնել օրիորդ Սոֆիային ձեր գալու մասին, բայց դուք արդէն հաղորդած էիք սորան այս բարի համբաւը...

ՍՈՖԻԱ

Պարոնը կամեցաւ իւր ուրախութեան մի մասն էլ ինձ շնորհել, բայց նորան այդ չը յաջողեցաւ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես ուրախացայ, որ օրիորդ Վարդուհին մեզ միատեսակ ուրախութիւն պատճառեց իւր վերադարձով։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ո՜հ, որչափ ուրախ եմ ձեր ուրախութեան վրայ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, օր. Բերոյեանցին։

Ասացէ՛ք, օրիորդ, ի՞նչ էիք անում, ի՞նչպէս էիք անց կացնում ձեր ժամանակը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Գործում էի ձեր նախագծով... աշխատում էի ընտելանալ իմ նոր պաշտօնին. իսկ ազատ ժամերս որսի էի գնում գիւղացիների հետ։ Ես սովորեցայ հրացան արձակել և կարող եմ նշան դնել և գետին գլորել ամէն մի թռչուն... (շարժուածք է տոմ։) Պա՛ֆ... և որսը ձեռիս է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծիծաղելով յետ է քաշվում։

Ո՜հ, խնդրեմ ինձ էլ չը հարուածէք...

ՍՈՖԻԱ, մի կողմ։

Մի հարուած սրտումդ է, միւսը չի հասնիլ քեզ... (Բարձր։) Պարոն Ջանումեանց, մի՞թէ դուք էլ ինձ պէս վախենում էք հրացանից։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծիծաղելով։

Օրիորդը մեծ եռանդով պատկերացրեց մեր առաջ որսորդին։

ՍՈՖԻԱ

Դուք յափշտակուեցաք, շատ հասկանալի է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, օր. Բերոյեանցին։

Ուրեմն, ազատ ժամերդ որսի էիք գնում... (Նստում է։)

ՍՈՖԻԱ, ընդմիջելով։

Պարոն Ջանումեանց, մոռացայ հարցնել, ինչպէս տեսաք իմ աղախնին։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ցրուած։

Ես նորան մի քանի դեղեր տուի... (օր. Բերոյեանցին.) Յետոյ, օրիորդ... էլ ի՞նչ կ'ասէք մեզ...

ՍՈՖԻԱ

Պարոն Ջանումեանց, դուք ուրիշ հիւանդներ չունի՞ք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ո՛չ... ինչու էք հարցնում...

ՍՈՖԻԱ

Որովհետև սորանից առաջ շտապում էի՛ք կարևոր գործի։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ժպիտով։

Ա՜խ... երա՜... մոռացայ... այնքան զբաղուեցայ օրիորդի վերադարձով, որ մոռացայ կարևոր գործը... շնորհակալ եմ որ միտս ձգեցիք։ (օր. Բերոյեանցին։) Յուսով եմ, որ մենք կրկին կը տեսնուինք։ այն ժամանակ միջոց կ'ունենանք խօսելու... Ես շատ, շատ բան ունիմ ձեզ հաղորդելու... (Վեր է կենում։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, վեր կենալով։

Մի՞թէ գնում էք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո՛, հարկաւոր է... ձեզ էլ հարկաւոր է հանգստանալ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո՛, ես շատ դադրած եմ...

ՍՈՖԻԱ

Գնանք հանգստացիր. սենեակիս կից սենեակը պատրաստ է քեզ համար։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Շատ շնորհակալ եմ, սիրելի Սոֆիա...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ուրեմն, ցտեսութիւն, օրիորդ Վարդուհի։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ցտեսութիւն, պարոն Ջանումեանց...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ցտեսութիւն, օրիորդ Սոֆիա։ (Գնում է, ճանապարհին պապահում է Գուլէանցին, որ խորթից դուրս է գալիս։)

ՏԵՍԻԼ ԵՕԹԵՐՈՐԴ

ՆՈՒՔԱ, ԳՈՒԼԵԱՆՑ։

ԳՈՒԼԵԱՆՑ, հանգստանալով Ջանումեանցին։

Պարոն գօքտօր, դուք գնում էք... Դուք այստեղ էք եղել, իսկ ես ձեզ դուրսն եմ պատատում։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո՛, մենք այստեղ էինք օրիորդ Բերոյեանցի հետ։ (Ասում է գալիս։)

ԳՈՒԼԵԱՆՑ

Ա՜խ... եկաւ արդէն... (ասում է վազում։) Ա՜խ... օրիորդ Բօզա... քաղաք էք եկել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Բարև ձեզ, պարոն Գրիգոր... Եկել եմ և այժմ գնում եմ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ուր էք գնում. մեզ մօտ չէք մնում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Գնում եմ ինձ համար պատրաստած սենեակը։

ԳՈՒԼԵԱՆՑ

Հա՜... ձեր սենեակը... հենց զլատէի չէք ուզում մնալ մեզ մօտ։

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ, ծիծաղելով։

Դուրս էլ անէք, ո՞ւր կերթամ...

ԳՈՒԼԵԱՆՑ, ջանա-մեանցին։

Միշտ ուրախ է, միշտ զուարթ... Տեսէք, տեսէք, պարոն դօքտոր, ինչպէս կազդուրուել է, ինչպէս գեղեցկացել է...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Պարոն Գրիգոր, դուք ինձ կոմպլիման էք ասում, ես այդ չեմ սիրում...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ես ձեզ հաւատացնում եմ, առանց հանաքի... Այդպէս չէ՞, պարոն դօքտոր...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Հայաստանի հողն ու ջուրը ո՞ւմ չի վրայ գալ...

ՍՈՖԻԱ

Ո՞վ է ձեր ձեռքը բռնում, գնացէք, վայելեցէք դուք էլ այն օդը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Իրաւ, ճշմարիտ է ասում Սոֆիան... գեղեցիկ օդ, մաքուր ջուր... Այո՛, այո՛... օրիորդ Բօզան ուժի է եկել... Պարոն դօքտոր, ես լսել եմ որ գիւղացիք աւելի երկար են ապրում, երևի այդ լաւ օդից ու ջրից է։

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Գիւղացիք էլ շատ հոգսեր ունին, որ ձեզ քաղաքացւոց յայտնի չէ...

ՍՈՖԻԱ

Այդ հոգսերին նրանք լաւ են դիմանում...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ոչ ամէն ժամանակ, սիրելի Սոֆիա...

ԳՈՒԼԵԱՆՑ

Հաւատացած եմ, օրիորդ Բօզա, որ դուք հոգսեր չէք ունենալ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Այժմ ազատ եմ և ձեզ եմ պարտական։

ԳՈՒԼԵԱՆՑ

Խնդրեմ, խնդրեմ, ես միշտ պատրաստ եմ...

ՍՈՖԻԱ, ծիծաղով։

Պապա, այժմ Բօզան է քեզ կոմպլիման ասում...

ԳՈՒԼԵԱՆՑ

Սրա բարի սիրտը ինձ լաւ յայտնի է... Այսպէս չէ՞, պարոն դօքտոր...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Թող օրիորդն ինքը վկայէ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Բաւական է, խնդրեմ, այդքան էլ ինձ բարձրացնել... Ես շատ յոգնած եմ, թոյլ տուէք ինձ հանդըստանալու... Սոֆիա՛, կը գա՞ս ինձ հետ...

ՍՈՖԻԱ

Ուրախութեամբ։ Գնանք հանգստացէք... (Օրիորդները բարեւելով դուրս են գնում։)

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՋԱՆՈՒՄԵԱՆՑ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ինչպէ՞ս էք տեսնում օր. Բերոյեանցին։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Միևնոյնն, ինչ որ առաջ էր։

ԳՈՒԼԵԱՆՑ

Աշխատող օրիորդ է. իրան համար անկախ հաց է ճարում... սա չեղած բան է մեր մէջ... այդպէս չէ՞...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո՛, դա գովելի բան է։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ափսո՛ս որ այդպիսի խելօք ու գլխուն աղջիկը մի կտոր հացի համար գեղէ գեղ է ընկել։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ինքն ընտրեց իրան համար այդ ճանապարհը։

ԳՈՒԼԵԱՆՑ

Բաս ինչ անէր խեղճը, քանի որ ուրիշ ճանապարհ դրա համար չէր բացվում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ ճանապարհն իրա համար աւելի լաւ համարեց...

ԳՈՒԼԵԱՆՑ

Դուք ինձ չէք հասկանում... Ես ասում եմ որ լաւ կը լինէր եթէ դրան ամուսնացնէինք... Ձեզ պէս մի մարդ, ընկեր կ'ունենայիք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծպտալով։

Պարոն Գրիգոր, այդքան էլ հեշտ չէ այդ բանը... Օր. Բերոյեանցն այն տեսակ աղջկերանցից չէ, որ ուրիշի ընտրութեանը հաւանի... Այժմ նա ազատ է, թո՛ղ իրա ընտրածի հետ ամուսնանայ... մեզ հարկաւոր չէ խառնուիլ այդ գործի մէջ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Խօսք եկաւ, ասացի... Ո՞վ է իմանում, կարելի է հարկաւոր լինի նրան մեր միջնորդութիւնը... Աղջկերքը շատ անգամ երեսանց ցոյց են տալիս ուրիշ, սրտանց ուրիշ բան են ցանկանում... գուցէ մեզ յաջողի իմանալ օր. Բոզայի ուզածը...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Թո՛ղ նա ինքը յայտնէ մեզ այդ...

ԳՈՒԼԵԱՆՑ, ուրախ խփելով։

Է՛հ, էհ, պարոն դօքտոր, դուք աղջկերանց չէք ճանաչում... Թո՛ղ այդպէս լինի... մի օր ի հարկէ կ'իմանանք թէ ո՞վ է նրա ընտրածը...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Տայ Աստուած... Էհ մնաք բարև, պարոն Գրիգոր... (շտապով բարևում է և դուրս է գնում խորշի ետևից։)

ԳՈՒԼԵԱՆՑ, Ջանումեանցի յետևից նայելով։

Դօքտորիս դամարը գտայ... Փառք Աստուծոյ, սրտից ծանր քարը գլորուեցաւ։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Գուլեանցի տան հիւրասենեակը. յատակը փռած է գորգերով. ճոխ կահ-կարասիք։ Սենեակի աջ կողմը դրած է դահաւորակ եւ բազկաթոռներ. դահաւորակի առաջ կլոր սեղան, որի վերայ կայ ալբոմ. իսկ ձախ կողմ—թախտ մուխարաներով։ Ուր հարկն է աթոռներ, լամբերնի սեղաններ աշտանակներով. հայելիներ, պատուհանների վերայ հարուստ վարագոյրներ, հաղիւագիւտ ծաղիկներ ծաղկանոցներում։ Սենեակը ունի երեք դուռ՝ միջինը մուտքի դուռն է. ձախ կողմինը Գուլեանցի դրասենեակն է տանում, իսկ աջ կողմինը—Սոֆիայի սենեակը։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍՈՖԻԱ, մենակ։

(Նստած է գահաւորակի վերայ և գիրք է կարդում։) Վերջապէս անտանելի է... (գիրքը յետ է դնում։) Այսպէս էլ փոքրոգութիւն իմ մէջ ես երբէք չէի կարող երևակայել։ Ահա, մի ժամ է կարդում եմ և կարդացածս չեմ հասկանում... (մտածում է) Անկարելի է... Ես լսած ու կարդացած եմ, որ երբեմն, մինչև անգամ ազնիւ մարդիկ, իւրեանց դիտաւորութիւնը ծածկելու համար դիմում են խորամանկութեան և իւրեանց սառնասիրտ են ձևացնում... Ջանումեանցն այնպէս է վարվում Բօզայի հետ, կարծես թէ նոցա

մէջ ոչինչ չկայ... բայց ես խորը համոզուած եմ որ սիրում է և շատ է սիրում նորան... Իսկ Բօզան... ինչպէս երևում է, պաշտում է նորան և աղօթում է նորա համար... Ա՜խ... Երանի նոցա... Ո՞րքան բաղդաւոր են որ կարողանում են իւրեանց զգացմունքներն ազատ արտայայտել միմեանց... Իսկ ես... ես փոքրոգի եմ և անվստահ... (շտապով վեր է կենում։) Ոչ, ոչ, անտանելի է ինձ այս դրութիւնը... (նայում է հայելու մէջ։) Բօզան նորան սիրում է... միթէ ես չեմ սիրում... միթէ իմ զգացմունքները պակաս են նորանից... (յետ է գալիս հայելուց։) Ոչ, ոչ ես պէտք է բոլորն իմանամ, ճիշդ իմանամ... (մտածմունքի մէջ) Բայց ես ինչպէս իմանամ... նա միշտ լուռ է, ես անվստահ... նա չէ սիրում շատ խօսել իւր մասին, իսկ ես վախենում եմ նորան խօսեցնել... Սպասել... մինչև երբ... Հարցնել Բօզայից... իսկ եթէ նա ասէ թէ ուզիզ է, այն ժամանակ ի՞նչ անեմ... (շուրջը նանգնած է մեկ սենեակում։)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ԳՈՒԼԵԱՆՑ։

ԳՈՒԼԵԱՆՑ, մտնելով մեջն դանկոյ։

Մենակ ես, սիրելի Սոֆիա...

ՍՈՖԻԱ, ոտքի գնալով։

Այո, պապա...

ԳՈՒԼԵԱՆՑ

Բօզան որտեղ է։ (Սոֆիայի յետևից բռնած ոտքի է գալիս։)

ՍՈՖԻԱ

Գնաց ուրիշ տեղ։

ԳՈՒԼԵԱՆՑ, խորը դժգոհելով։

Տխուր ես երևում, Սոֆիա, հիւանդ հո՞մ չես...

ՍՈՖԻԱ, հարմրելով։

Ոչ, պապա, ես բոլորովին առողջ եմ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Դէմքիցդ չէ երևում... թէ գաղտնիք ունիս, ասա՛ ինձ, ինչպէս միշտ ոչինչ չես թագցրել ինձանից։

ՍՈՖԻԱ, մի հոգ։

Ինչ ասելու բան է որ ասեմ... (Բարձր՝ աշխուժելով ծպտուլ։) Ի՞նչ գաղտնիք կարող եմ ունենալ... ոչինչ... այնպէս... գիրք էի կարդում, ընկայ մտածմանց մէջ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի հարկէ, դու ինձանից գաղտնիք չը պէտք է ունենաս... Ես էլ քեզանից ոչինչ չեմ թագցնիլ ինչ որ քեզ կարող է վերաբերել և ուրախացնել... Այժմս էլ մի բան կ'ուզեմ քեզ հաղորդել... Նստիր ու լսէ ինձ, տես թէ ի՞նչ լաւ բան եմ մտածել։

ՍՈՖԻԱ, այլայլած։

Ի՞նչ բան ես մտածել, պապա...

ԳՈՒԼԵԱՆՑ

Զատ լաւ բան և գիտեմ որ դու էլ ինձ հետ համաձայն կը լինես։ Նստիր, սիրելիս, նստիր...

ՍՈՖԻԱ, նստելով։

Այնպէս խորհրդաւոր կերպով ես ասում, որ վախենում եմ չը լինի թէ ինձ ուրախացնելու տեղ տրխրացնես...

ԳՈՒԼԵԱՆՑ

Մի՛ վախենար. այդ բանը քեզ չէ վերաբերում...

ՍՈՖԻԱ, ընդհանրելով։

Ապա ո՞ւմ...

ԳՈՒԼԵԱՆՑ, նստելով։

Բոզային...

ՍՈՖԻԱ, ծիծաղելով։

Երևի նրա համար էլի տեղ ես ճարել... Ոչ, պապա, զուր է աշխատանքդ՝ մասնաւոր տներում նա դաստիարակի պաշտօն չի ընդունիլ... վաղօրոք գուշակում եմ որ յաջողութիւն չես ունենալ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ոչ. դաստիարակի պաշտօն չէ, այլ ամուսնոյ և լաւ մարդու ամուսնոյ վիճակը։

ՍՈՖԻԱ

Օհ՜ո, բրավո, պապա, ուրախ եմ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ապա, որդի, որ ասացի ուրախալի բան եմ հաղորդելու... Հիմի որ ասեմ թէ ումն եմ ցանկանում տալ նրան, այն ժամանակ դու աւելի կ'ուրախանաս...

ՍՈՖԻԱ

Տեսնենք, տեսնենք...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո՛, որդի, քեզ սիրելով, քո սրտի ուզածը ցանկանալով, ես մտադիր եմ այդ որբ և քո լաւ բարեկամ աղջկան բաղդաւորացնել... բայց նրան բաղդաւորացնողը, նրան երջանկացնողը, գիտես ինքդ, պէտք է լինի նրա պէս աշխատող, նրա պէս ազգի համար գլուխը յետ դնող մարդ... այդ մարդուն

ես գտել եմ... նա է մեր դոքտոր Ջանումեանցը։

ՍՈՖԻԱ, այլայլած։

Ջանումեանցը... և նա համաձայն է...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ես նրան միայն ակնարկեցի և ինչպէս տեսայ չէ չի ասիլ...

ՍՈՖԻԱ, շփոթած։

Ուրեմն վերջացած բան է...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այսինքն դեռ չի կարելի ասել թէ վերջացած բան է, միայն յուսով եմ որ թէ Ջանումեանցը և թէ Բօզան շատ բաւական կարող են լինել. այդ ընտրութիւնը դրանց սրտիցն է։

ՍՈՖԻԱ

Ի՞նչու...

ԳՈՒԼԵԱՆՑ

Շատ պարզ է... երկուսն էլ այնպէս են սովորած որ այսօր մէկ անկիւնում կը գործեն՝ մէկը բժշկութեամբ, միւսը վարժուհութեամբ, միւս օրը՝ մէկուրիշ անկիւնում, և այդպէս քաղցրութեամբ իրանց համար կ'ապրեն... թէ չէ, մեր քաղաքի լաւ օջախի որ աղջիկը կամ տղան կարող է տանել այդ տեսակ կեանք... Համաձայն ե՞ս ինձ հետ Սոֆիա... Ինչու չես խօսում... Միթէ դու չէիր ուզիլ որ դրանք ամուսնանային։

ՍՈՖԻԱ

Ինչու չէ... բայց պէտք է իմանալ և նրանց միտքը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի հարկ է... ես էլ հէնց դրա համար յայտնեցի քեզ իմ միտքը որ Բօզայի հետ էլ դու խօսես. Ջանումեանցի հետ ես կրկին կը խօսեմ։

ՍՈՖԻԱ

Ոչ, պապա, ես նրա հետ չեմ խօսիլ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ինչու չես խօսիլ... վարձքի բան է... Մի՛ ամաչիր, ուզիլ ասա ամենայն բան, ինչ որ ես քեզ ասացի... (վեր է կենում։) Ուրեմն դու Բօզայի հետ կը խօսես, ես Ջանումեանցի հետ... Աստուած տայ այս գործը յաջողի. սրանից լաւ բան Բօզայի համար էլ չէինք մտածել. յաւիտեանս պարտաւորած կը լինինք նրան։ (Մօտենալով Սոֆիային և շփելով նրա գլուխը։) Ախ, ե՞րբ կը լինի որ այս տեսակ խօսակցութիւն քեզ հետ էլ ունենամ, այն ժամանակ ես ինձ երջանիկ կը համարեմ... Աստուծով, Աստուծով...

ԾԱՌԱՑ, մտնելով մեջեն դռնից։

Հիւրեր են եկել։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ո՞վքեր են։

ԾԱՌԱՑ

Ասացին՝ Աթոյեանց։

ԳՈՒԼԵԱՆՑ

Աթոյեանց... լաւ, գնա այստեղ խնդրիր...

ԾԱՌԱՑ

Ես ձեր գրասենեակը հրաւիրեցի։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի՞նչու... ախ, գնա լաւ... (Ծառան դուրս է գնում։)

Այս ի՞նչ հրաշք է... տասը տարուց աւելի կը լինի այդ մարդն իմ տունս ոտք չէ դրել... Սոֆիա, միտդ է Աթոյեանցը...

ՍՈՖԻԱ, ցրուած։

Ոչ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Մոռացած կը լինիս. այն ժամանակ երեխայ էիր։ Զարմանալի բան... (գնալով դէպի յոխ դռները) Հա. մեծամիտ պարոն Սիմօն, քո ոտովդ եկար, յիշեցիր մեր բարեկամութիւնը... Երևի փողդ է պակասել. ուրիշ ինչ գործ կ'ունենաս ինձ մօտ... խա, խա... (դուրս է գնում։)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, յետոյ ՋԱՆՈՒՄԵԱՆՑ։

ՍՈՖԻԱ, մտածմունքի մէջ։

Կատարուեցաւ գուշակութիւնս... «Յուսով եմ որ նա չէ չի ասիլ», ասում է հայրս... ի հարկէ այդպէս է... (վշտացած վէր է ընկնում։) Ո՛չ, ո՛չ, ես Բոզային ոչինչ չեմ ասիլ... ինչպէս ասեմ թէ ուզիր Ջանումեանցին. ո՛չ, ո՛չ, չեմ կարող...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, մանելով մէջն դռնից։

Դուք ինձ կանչել էիք, օրիորդ, բարև ձեզ...

ՍՈՖԻԱ, վանեցած։

Ա՜խ, պարոն Ջանումեանց... Ո՛չ... այո՛, այո՛... (ուշի գալով) Բարև պարոն Ջանումեանց... Այո՛, ես

խնդրել էի ձեզ... աղախինս երէկ իրիկուն շատ վատ էր իւրեան զգում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մի՞թէ... Երէկ նորան այնպէս չը տեսայ, որ իրիկուն վատ զգար իւրեան։ Ես այս րոպէիս կ'երթամ նորա մօտ...

ՍՈՖԻԱ

Այո՛, հարկաւոր է նորան տեսնել... (Ջանումեանցը շուտ է գալիս) պարոն Ջանումեանց... (անորոշաբար) Դուք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ, դուք գործ ունիք ինձ հետ...

ՍՈՖԻԱ, անվստահ։

Ո՛չ... խնդրեմ ասացէք... աղախինս...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ, դուք բոլորովին ի զուր էք նեղանում. նորա դրութիւնը այդքան էլ վտանգաւոր չէ...

ՍՈՖԻԱ, ուրախ։

Այո՞...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Հաւատացած եղէք... Ես ձեզ անպատճառ կ'ասէի եթէ վատ բան նշմարէի... Հասարակ կրծքի ցաւ է, որ կարող էր պատահել շատ աշխատելուց։

ՍՈՖԻԱ

Այո՞... Պարոն Ջանումեանց... Հայրս... ձեզ հետ... ինչ խօսակցութիւն ունէր...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ե՞րբ...

ՍՈՖԻԱ

Չեմ իմանում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ո՞ւմ մասին։

ՍՈՖԻԱ

Ձեմ իմանում... կարծեմ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Եթէ աղախնիդ մասին էք ուզում իմանալ, նա առաջարկեց ինձ նորան Հիւանդանոց ուղարկել, բայց ես չը համաձայնեցայ, գիտէի որ այդ ձեզ հաճելի չէր լինի։

ՍՈՖԻԱ

Ոհ, շատ շնորհակալ եմ... խեղճը կարող էր աւելի հիւանդանալ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես այդ բանը նախագուշակեցի։

ՍՈՖԻԱ

Հիւանդանոցում, ուրիշների ձեռքում... Ոհ, նա կը մեռնէր այնտեղ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ մի նախապաշարմունք է. թէ չէ այնտեղ աւելի լաւ կը խնամէին նորան։

ՍՈՖԻԱ

Ո՛չ, ո՛չ... հարկաւոր չէ... այս տեղ էլ լաւ կը խնամենք... Բօզան յանձն առաւ խնամելու։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Իմացայ... Ամենայն տեղ իւր բարի ու ազնիւ բնաւորութիւնը ցոյց է տալիս... բայց ես երկար խօսեցայ ձեզ հետ...

ՍՈՖԻԱ

Սպասեցէ՛ք... Բօզան բարի է, չէ՞...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դուք ինքներդ լաւ ճանաչում էք նորան...

ՍՈՖԻԱ

Բայց միթէ դուք չէք ճանաչում... Հայրս ինձ արդէն յայտնեց...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ի՞նչ բան...

ՍՈՖԻԱ

Ձեր խօսակցութիւնը նորա մասին...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ծիծաղելով։

Խա՛, խա՛, խա՛, յայտնե՞ց արդէն...

ՍՈՖԻԱ

Դուք ծիծաղում է՞ք... Ուրեմն ուղիղ է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Իւրեանք գիտեն...

ՍՈՖԻԱ, ինչպէս իրան։

Շատ լաւ բան է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ինչու չէ... մարդուս վերջին նպատակն այդ է... ոչ ոքից չի անցնիլ այդ բաժակը, միայն թէ ցանկութիւն լինի...

ԾԱՌԱՑ, մանելով յոթ դռանից։

Օրիորդ, պարոնը խնդրում է ձեզ...

ՍՈՖԻԱ

Ի՞նչ կայ...

ԾԱՌԱՑ

Ձեմ իմանում, հիւրեր են այնտեղ, հրամայեց խնդրել ձեզ։

ՍՈՖԻԱ

Ախ, հիւրեր... շատ լաւ, յետոյ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Գնացէք, օրիորդ, ես կ'երթամ աղախնիդ տեսնելու։

ՍՈՖԻԱ

Շատ լաւ, առանց ինձ տեսնելու չը գնաք։ (ԾաՀայլն) Սպասցէք հօրս որ այս րոպէիս կը գամ։ (դուրս է գնում։)

ԾԱՌԱՑ

Շատ բարի, օրիորդ։ (գնում է դէպի յոկ դռները։)

ԳՈՒԼԵԱՆՑ, դուրս գալով յոկ դռնից, ԾաՀայլն։

Ո՞ւրտեղ է օրիորդը...

ԾԱՌԱՑ

Այս րոպէիս կը գայ. գնաց իրա սենեակը։

ԳՈՒԼԵԱՆՑ, պեռնելով Ջանումեանցին։

Աթոյեանցներն են...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, մի կողմ։

Նոր հիւրեր։ (ՊարարաՀում է գնալ։)

ԳՈՒԼԵԱՆՑ

Դուք գնում էք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես այստեղ էլի գործ ունեմ։ (դուրս է գնում մեջեն դռնից։)

ԳՈՒԼԵԱՆՑ, ԾաՀայլն։

Պարտիզի պատուհանը բաց արա և օրիորդին այստեղ խնդրիր...

ԾԱՌԱՑ

Այս րոպէիս։ (Ելնի ասելով պարարհանը բաց է անում և դուրս է գնում մեջեն դռնից։)

ԳՈՒԼԵԱՆՑ, մտնելով յոկ դրան։)

Համեցէք, այստեղ համեցէք, այստեղ աւելի հով է։

ՏԵՍԻԼ ՀՈՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, մտնելով։

Այո, այստեղ աւելի հով է։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ինչպէս է պատահել որ ձեր Բարսեղը եկել է և ինձ Ջանումեանցը ոչինչ չէ ասել։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Ջանումեանց... այստեղ էլ է մտել...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ջանումեանց... այդ ինչ Ջանումեանց է...

ԳՈՒԼԵԱՆՑ

Դուք չէք ճանաչիլ... դօքտոր Ջանումեանցն է, իմ տանու բժիշկը...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Տանու բժիշկ... հետաքրքիր է...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Բժիշկ... լսած չեմ դրա անունը... Յետոյ, լաւ բժիշկ է։

ԳՈՒԼԵԱՆՑ

Փառք Աստուծոյ, դրա ոտը վրայ եկաւ իմ տանը։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, մէջ կողմ։

Ո՞տը վրայ եկաւ... լաւ ըեկամանդացիօն է...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Յետոյ, նա ինչ կը գլտենար, որ Բարսեղս եկել է Թիֆլիս։ Բարսեղ, դու նրան ճանաչում ես...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Այո... Ազգասէր բժիշկներից է...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ազգասէր...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո, ազգասէր... Հայոց խնդիր, Վասպուրականի Հայեր, Խրիմեան Հայրիկ, Ներսէս Պատրիարք...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Այդ ինչ բաներ են...

ԳՈՒԼԵԱՆՑ

Չիմիկուայ մեր երիտասարդների խօսք ու զրոյցը։ (Նստում է Խաչատուր վերայ. Բարսեղ Ադոյեանցը կանգնած է)։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, նստելով։

Բան ու գործը թողած մեռելների ետևից են ման գալիս. Ներսէսը քանի տարի է ինչ որ մեռել է...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, նստելով գահու

վերայ։

Պապա, դա ձեր իմացած Ներսէսը չէ՝ նա կաթողիկոս էր, իսկ սա պատրիարք է։ (Վերցնելով գիրքը, մէջ կողմ։) Օհո, Սպէնսէր... լուսաւորեալ աղջիկ է եղել։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Բաս այդ Ներսէսին ես չեմ ճանաչում. իսկ իմ

ասած Ներսէսին լաւ էի ճանաչում շատ քրիստոնեայ հոգևոր տէր էր, լուսահոգին...

ԳՈՒԼԵԱՆՑ

Սրանք նոր մարդիկ են, նոր գործ են բռնում...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Իմ Բարսեղն էլ նոր մարդ է, բայց փառք Աստուծոյ, հեռու է պահում իրան այդ դատարկ բաներից։ Ուսումն աւարտեց, ուզում էի որ թագաւորական պաշտօն ստանար, բայց սկսեց պարապել փաստաբանութեամբ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Թագաւորական պաշտօնից ինչ շահ կայ... Դուք էլ երեսուն և հինգ տարի ծառայեցիք, ինչ դուրս եկաւ...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ինչո՞ւ, որդի... Ստատսկի Սովէտնիկի աստիճանին հասայ. թողի պաշտօնս, հազար ռուբլի տարեկան թոշակ էլ կտրեցին... Քի՛չ բան չէ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Դուք էլ ծառայութեան մէջ չէ՞ք...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Այս քանի օրերս միայն թողի պաշտօնս... Ֆերացայ, պարոն Դրիզոր...

ԳՈՒԼԵԱՆՑ

Բայց ծառայեցի՛ք շնորհքով և ձեզ էլ չը մոռացաք...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Է՜... փառք Աստուծոյ... մի կտոր հաց ունիմ յետ գցած սև օրերիս համար։

ԳՈՒԼԵԱՆՑ

Այդպէս ծառայելն ի հարկէ լաւ է...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Լսում ես Բարսեղ, ում կ'ուզես հարցրու՝ ծառայութիւնը լաւ են համարում...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Փաստաբանութիւնն աւելի փող է տալիս...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Այդ բանը միայն ուղիղ է... Պարոն Գրիգոր, մի գործի համար Բարսեղս երկու հազար ռուբլի ստացաւ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ո՜հ, լաւ է այդ. ինչ չաղ գործ է եղել...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Աւազակ Աբդուլ Քէրիմի գործն էր... Սիբիրից ազատեց...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ափսոս, որ այդ տեսակ գործեր քիչ են ընկնում ձեռքս...

ԳՈՒԼԵԱՆՑ, վէր է կենում և մօտենալով Բարսեղ Անոյեանցին, խփում է նորա ուսին։

Թէ այդպէս շնորհքով էք եղել... տարեկան տասը, քան հազար ռուբլի կապալով կը վերցնեմ ձեր գործերը. միայն աւելորդ արդիւնքն ինձ լինի... (Բուլուխչեանց ծիծաղում են. ամէն դռնից դուրս է գալիս Սոֆիան։)

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՒՔԱ, ՍՈՖԻԱ։

ԳՈՒԼԵԱՆՑ, գնալով Սոֆիայի մօտը։

Սոֆիա... (դառնալով հիւրերին։) Ահա, իմ աղջիկը։ (Սոֆիային։) Սրանք էլ, որդի, մեր բարեկամներ են։ (Բարեւում են։)

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ձեզ, որդի, պատկուց ճանաչում եմ. Բարսեղիս հետ շատ էք խաղացել...

ՍՈՖԻԱ

Շատ ուրախ եմ ծանօթանալ ձեզ հետ։ (Դառնում է Բուլուխչեանին։)

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, դառնալով Սոֆիայի մօտ։

Օրիորդը, երևի, մոռացել է ինձ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Երեխայութեան օրերը քաղցր օրեր են, չեմ կարծում որ Սոֆիան մոռացած լինի ձեզ...

ՍՈՖԻԱ

Ես, ճշմարիտն ասած, չեմ մտաբերում պարոնին։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ձեր միտն է պառաւ դայեակը, որ խստիւ պահանջում էր մեզանից չարութիւն չանել...

ՍՈՖԻԱ

Մեր դայեակը միտս է։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Եթէ դայեակին մտաբերում էք, Բարսեղիս էլ կարող էք յիշել...

ՍՈՖԻԱ, ծպտալով։

Կարելի է...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Կամենում էք, օրիորդ, որ ձեզ յիշեցնեմ մի քանի հանգամանքներ մեր մանկական կեանքից... Դուք շատ ծանրաբարոյ երեխայ էիք, միշտ վրաս բարկանում էիք, երբ ես ձեզ մոտենում էի...

ՍՈՖԻԱ

Երևի դուք ինձ անհանգիստ էիք անում...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ոհ, այո, Բարսեղս շատ չար երեխայ էր, այժմ շատ ու շատ փոխուել է... (Գուլենային)։ Զա՞ր տարի է ինչ որ այս տունն առել էք։

ԳՈՒԼԵԱՆՑ

Հինգ տարի կը լինի. շատ էժան ընկաւ ձեռքս...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, վեր կենալով։

Զատ լաւ տուն է... (Մեն է գալիս։)

ԳՈՒԼԵԱՆՑ, վեր կենալով։

Պարտէզ էլ ունի։ (Մոտենում է պապուհանին։)

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, հեռանալով նորից։

Պարտէզ էլ... շատ, շատ լաւ է... Զատ քիչ տուն կը գտնես Հիմի Թիֆլիսում որ պարտէզ ունենայ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Կ'ուզէք, տեսնել... մեծ չէ, բայց կարգի է բերած...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Մեծ ուրախութեամբ... Բարսեղս էլ շատ է սի-

րում պարտէզը... Բարսեղ, գնանք պարտէզն էլ տեսնենք։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Այս րոպէիս օրիորդի հետ կը գանք այնտեղ...

ԳՈՒԼԵԱՆՑ, դիմելով դեպի մեջն դռանը։

Համեցէք, դուք էլ համեցէք, պարոն Բարսեղ։ Սոֆիա, ցոյց տուր պարոնին քո ծաղիկները։ (Դուրս է գնում Սիմէօն Ադոյեանցի հետ։)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Դուք չէք բարկանալ, եթէ ես ձեզ իմ մի յանցանքս յայտնեմ...

ՍՈՖԻԱ

Ի՞նչ յանցանք էք գործել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ես հետաքրքիր եղայ իմանալ թէ դուք ինչ գիրք էք կարդում։

ՍՈՖԻԱ

Մի՞թէ այդ յանցանք է...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Զատ աղջիկներ յանցանք են համարում... բայց ես այդ ուրիշ դիտաւորութեամբ էլ արի... Սա մի նշան կը լինի ձեզ մտաբերելու որ դուք Սպենսէրի հեղինակութիւնն էիք կարդում այն ժամանակ, երբ նորոգեցի ձեզ հետ ծանօթութիւնս...

ՍՈՖԻԱ

Ո՜Հ, ինչ խիստ էք եղել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ

Այո՛, այդ կողմից ես պահանջող եմ։ Զարմանում եմ թէ դուք ինչպէս մոռացել էք ինձ։

ՍՈՖԻԱ

Ձա՜ռ ժամանակ է ինչ հեռացել էք քաղաքից...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ

Մօտ տասը տարի Ռուսաստանումն էի... սակայն երեք տարի սորանից առաջ եկել եմ Թիֆլիս ծնողացս տեսութիւն...

ՍՈՖԻԱ

Այդ միջոցին էլ ես ձեզ այստեղ տեսած չեմ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ

Ձէիք էլ կարող տեսնել, որովհետև դուք դպրոցումն էիք։ Այժմ մօրից խմանալով որ դուք աւարտել էք ուսումն, իսկոյն յիշողութեանս մէջ ներկայացաւ ձեր ծանրաբարոյ դէմքը, ձեր... միով բանիւ սիրտս լցաւ մեծ ուրախութեամբ, որովհետև ձեր տանից ես միշտ ուրախ ու բաւական էի վերադառնում տուն...

ՍՈՖԻԱ

Ես ձեզ չեմ կարողանում մտաբերել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ

Ժամանակի ընթացք, նոր հանգամանքներ, նոր մարդիկ... բոլորը, բոլորը կարող էին անհետացնել ձեր յիշողութիւնից... ի դէպ, ասացի նոր մարդիկ... Ձեր հայրը յիշեց Ստեփաննոս Ջանումեանցին... նա ձեզ բարեկամ է... ազգական...

ՍՈՖԻԱ

Նա մեր տանու բժիշկն է։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ

Տանու՞ բժիշկ... Այո՛, այո՛, ձեր հայրն ասաց որ նորա ոտը շատ վրայ է եկել ձեր տանը... խորհրդաւոր է այս խօսքը՝ ոտը վրայ եկաւ, իսկ ձե՞ռքը... Շատ հանաքչի մարդ է եղել ձեր հայրը... Գիտէք թէ նա ինչպէս ներկայացրեց մեզ Ջանումեանցին՝ Վասպուրականի հայեր, Խրիմեան հայրիկ, Ներսէս պատրիարք... Այս ի՞նչ է նշանակում...

ՍՈՖԻԱ

Դուք հօրից բացատրութիւն չը խնդրեցի՞ք...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ

Քա՜ւ լիցի... այդ խօսքերը բացատրութեան կարօտ չեն։ Ջանումեանցն այն գլխից էլ ազգասէր էր. կարծեցի ժամանակը, հանգամանքները, վերջապէս կեանքը կը ջնջէին նորա մէջ այդ պատանեական մոլորութիւնները. բայց տեսնում եմ որ կայ եղել պատճառ, որ նորան դրդում է դէպի այդ գործերը...

ՍՈՖԻԱ

Երևի հաւատում է այդ գործերին։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ, մի կողմ։

Ջանումեանցն արդէն բժշկել է սորան. հարկաւոր է զգոյշ լինել։ (Բարձր) Այո՛, բայց ես միշտ ցնորք էի կարծում...

ՍՈՖԻԱ

Ի զուր...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՑԵԱՆՑ, մի կողմ։

Սակայն ոչինչ բան է եղել այս օրիորդը։ (Վեր կե-

նալով, Բարձր) Օրիորդ, կամենում էք գնալ պարտէզ...

ՍՈՖԻԱ, վեր կենալով։

Եթէ կամենում էք։ (Այս ժամանակ դռան շեմքը Բարձրամ է և ներս է մտնում Բերոյեանցը։)

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՆՈՒՔԱ, ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ներս վազելով։

Սոֆիա, Սոֆիա...

ՍՈՖԻԱ, ահաջ գնալով։

Ի՞նչ պատահեցաւ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ինչ որ երէկ Ջանումեանցը մեզ ասաց կարծես մասամբ ստուգվում է. լրագրերն ստացել են տեղեկութիւն. վազէ վազ գնացի խմբագրութիւն՝ ճիշդ իմանալու... (Ահաջ են գալիս։)

ՍՈՖԻԱ

Դու ինքդ գնացիր խմբագրութիւնը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Կարող էի մի թէ դիմանալ մինչև որ ճիշդը չիմանալի. բայց դորանով էլ չը բաւականացայ, գնացի և՛ Ցաճկաց հիւպատոսարանը...

ՍՈՖԻԱ, նստելով։

Զարմանալի մեծ վստահութիւն է քո կողմից...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Դորան կ'ասեն հաստատակամութիւն...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, նայելով Բարսեղ Աթոյեանցին,

յետոյ Սոֆիային դառնալ։

Այս մարդն ո՞վ է Սոֆիա...

ՍՈՖԻԱ, Բարսեղ Աթոյեանցին։

Ներեցէք... մոռացայ ձեզ ծանօթացնել օրիորդ Վարդուհի Բերոյեանցի հետ... պարոն Բարսեղ Աթոյեանց։ (Օր. Բերոյեանց և Բարսեղ Աթոյեանց դիմեանց հեռուից բարևում են։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Աթոյեանց... կարծեմ ես ձեր ազգականը լսած եմ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Կարելի է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո՛, անպատճառ լսած եմ... Սոֆիա՛, դու չե՞ս մտաբերում թէ ես որտեղ եմ լսել։

ՍՈՖԻԱ

Զարմանալի ես, Բոզա, ես ինչ գիտեմ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, դէ հողմ։

Ձիկ, ի՞նչ աղջիկ է... (Բարձր) Օրիորդ, դժուար թէ դուք ինձ այստեղ տեսած լինէիք, գուցէ Ռուսաստանում, եթէ միայն եղած էք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այժմ մտաբերում եմ... Ձեզ Ջանումեանցը ճանաչում էր Ռուսաստանում։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Այո՛, նա ինձ այնտեղ տեսած է։ (Դէ հողմ։) Հռոմէական դեղեցկուհի... (Դարձեալ է հեռու մտիկ։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Նա շատ անգամ յիշած է ձեզ իւր բարեկամների մօտ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Կարելի է հարցնել թէ ինչու համար են ինձ յիշել։ (Ֆ ՀՈՂՄ) Ափսոս. սա էլ է խմորուել Ջանումեանցից...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ի՞նչու համար... կ՚ուզէք իմանալ... որ դուք անտարբեր մարդ էք...

ՍՈՖԻԱ, Նախատելով։

Րօզա, ի՞նչպէս չես ամաչում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ի՞նչու ես ինձ նախատում... կարծես թէ առաջին անգամն ես այդ լսում...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ուրախ եմ որ միջոց եմ տուել նոցա խօսակցութեան առարկայ ունենալ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Չեմ կարծում որ ուրախ լինիք՝ մեծ բան չէ անտարբեր լինել ազգային գործերի մէջ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Մեծ բան էլ չէ նոցա կարծիքը ինձ համար։ Առանց այդ էլ շատ գործ կայ կատարելու...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Հէնց այդ պատճառով կ՚ուզէի ձեզ տեսնել և ձեզ ներկայանալ՝ վարժուելի հայ օրիորդաց ծխական դպրոցի...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ոհ, ի՞նչ երկար տիտղոս էք ունեցել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սպասեցէք, էլի կայ... Ես հասարակ վարսավիրայի աղջիկ եմ—դալլաքի—պարիկմախէրի չ՚կարծէք—չ՚ունիմ ոչ տուն և ոչ տեղ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, Ֆ ՀՈՂՄ։

Ճաշակիս յարմար կտոր է։ (Բարձր ծիծաղով։) Էլի...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այսքանս առ ժամանակ ձեզ բաւական է... Այժմ հերթը ձերն է... Դուք ով էք, ես գիտեմ, ասացէք միայն ձեր տիտղոսը...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ծիծաղելով։

Համեցէք... Իրաւաբան և օրէնսգէտ. պարապում եմ փաստաբանութեամբ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այդ շատ ձեռնտու արհեստ է։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Արհեստ... ասացէք գիտութիւն...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Օգնել մարդուն, երբ նորան օգնութիւն հարկաւոր չէ. ճնշել ու վնասել նորան, երբ նորան օգնութիւն է հարկաւոր,—սա գիտութիւն չէ, այլ արհեստ է...

ՍՈՖԻԱ, ծիծաղելով։

Րօզա, բաւական է...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Թողէք, օրիորդ Սոֆիա, ես քաջութեամբ կը տանեմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Տեսար, Սոֆիա, որ պարոն փաստաբանը փաստաբանի կարօտ չէ...

ՍՈՖԻԱ

Դու անտանելի ես, ՌՕզա. պէտք է փոքր ինչ քաղաքավարի լինել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ծխական դպրոցի վարժուհի եմ, այն էլ Հայոց դպրոցի, քաղաքավարի որ լինեմ պարոն Աթոյեանցը չի հաւատալ...

ՍՈՖԻԱ, ծլծաղելով։

ՌՕզա, սանձ դիր լեզուիդ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, վէր կենալով։

Լռում եմ, լռում եմ... Ախ, Սոֆիա, ներիր, մոռացայ կատարել քո յանձնարարութիւնը։

ՍՈՖԻԱ

Ուրեմն չը գնացիր դրատուն։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ծպտալով։

Մեղաւոր եմ...

ՍՈՖԻԱ

Ախ, ինչ մոռացկոտ ես եղել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, վէր կենալով։

Եթէ վարժուհու պաշտօնի մէջ էլ մոռացկոտ է օրիորդը. շնորհաւորում եմ ուրեմն այն ծխական Հայոց դպրոցի խեղճ աշակերտուհիներին։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ, ներեցէք, պարոն Աթոյեանց, վարժուհու պաշտօնի մէջ արի եմ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ձեմ հաւատում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Շատ հարկաւոր է։ (Մէջեն դուռէն մանում է Ջանումեանը. օր. Բերոյեանը նորա ոտքն է գնում։) Պարոն Ջանումեանցն էլ եկաւ։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, օր. Բերոյեանցի հետ քարտեզներ յեռոց։

Օհ, պարոն Աթոյեանց։... Ձեզ եմ տեսնում... Լսեցի թէ եկել էք, բայց չէի հաւատում։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Այո, եկայ, գործերս այստեղ տեղափոխեցի...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Յիշեցիք հայրենի տաք կլիման... շատ բնական է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ոտաջ գալով։

Պարոն Աթոյեանցը փաստաբանութեամբ է պարապում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Լսել եմ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Իսկ դուք, պարոն Ջանումեանց, ինչ էք անում այստեղ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, հանգստով։

Բժշկում եմ սովորական դեղերով... պացիէնտնե-
րից այցելութեան համար վաղօրոք մեծաքանակ
վարձ եմ ստանում և պատուիրում եմ նոցա գնել
դեղեր միայն ինձ հաճելի դեղատնից...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ծիծաղելով։

Եւ ձեր ոտը վրայ է գալիս այն տանն, ուր որ
մտնում էք։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո, այնտեղ, ուր որ ձեռքս չէ հասնում...

ՍՈՖԻԱ

Պարոններ, դուք երկդիմի էք խօսում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ Սոֆիա, մենք միմեանց հասկանում ենք...
Այժմ թոյլ տուէք ինձ ձեր աղախնի մասին տեղե-
կութիւն տալ...

ՍՈՖԻԱ

Ի՞նչպէս է նա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ա՜խ, իրաւ, ինչպէս տեսաք... իրիկունս համարեա
ամբողջ գիշերն անց եմ կացրել նորա անկողնի մօտ,
մխիթարելով և յոյսեր տալով նորան։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ոչինչ վտանգ չ'կայ՝ առողջանալու վրայ է։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Զարմանալի չէ քանի որ տանը բժիշկ կայ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Բժշկականութիւնը դեռ այդ երջանկութեան չէ
հասել։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Պարոն Ջանումեանց, փաստաբանութիւնը կարծեմ
այդ երջանկութեանը հասել է՝ փաստաբանին վար-
ձես էլ, եթէ ուզենայ գործդ տանել կը տայ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ պարոն Աթոյեանից պէտք է հարցնել...

ՍՈՖԻԱ

Պարոններ, խնդրեմ նստեցէք և ձեզ համար խո-
սելու ուրիշ առարկայ ընտրեցէք... Խնդրեմ ասա-
ցէք, պարոն Ջանումեանց, ստուգուեցաւ այն լուրը,
որ դուշակում էին մեզ լրագիրները...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, դողելով։

Տարաբաղդաբար, կարծես ստուգուելու վրայ է։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, դողելով Ռոխոյի վերայ։

Ես քեզ ասացի, Սոֆիա, որ այդպէս է։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, դողելով օր. Բերոյեանցի մօտ։

Ի՞նչի մասին է այդ լուրը, օրիորդ Վարդուհի...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Մի՞թէ ձեզ հետաքրքրելի է... Ասում են՝ քոլերան
տարածվում է Տաճկաստանի մէջ և մեծ կոտորած-
ներ է անում հայերից։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Դա մի սովորական երևոյթ է ասիական երկրի
համար, նամանաւանդ մեծ պատերազմներից յետոյ...
Միջոցներ պէտք են այդ ցաւի առաջն առնելու.
բժիշկն էլ այստեղ է՝ նա կը գիտենայ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո, բժիշկն այդ միջոցները գիտէ, բայց նորան
պակաս են համակրող անձինք...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Դիցուք թէ ես համակրում եմ... ինչ օգուտ կարող էի բերել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Գնացէք օգնելու բժիշկներին ցաւի առաջն առնելու...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Որ ես էլ հիւանդանամ... մեծապէս շնորհակալ եմ... ես էլի ապրել եմ ուզում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ուրեմն թողնենք որ ժողովուրդը կոտորուի...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Միթէ բացի մեզանից մտածող չկայ նոցա համար...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ոչ, պարոն Աթոյեանց, մենք էլ պէտք է մտածենք, մենք էլ որոց դեռ էլի սիրելի է ազգութիւնը... գործից մեզ հեռու պահելով, գործողներին ծաղրելով, բանն առաջ չի գնալ...

ՍՈՖԻԱ

Ի հարկէ մեզ վրայ միայն յոյս դնելն անկարելի է... մենք ձեռնհաս էլ չենք կարող լինել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այս այնպիսի գործ է որ մտածելով ու երկար ու բարակ խորհելով չի դարմանուիլ... Եթէ հնարաւոր է դրան օգնել, հէնց որ ստուգուի, պէտք է իսկոյն շտապել գործելու, եթէ կարելի չէ, լաւ է զուր ժամանակ չը կորցնել միայն խօսելով...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դուք կանայքդ միշտ այդպէս էք՝ խօսել հարկաւոր չէ, մտածել հարկաւոր չէ, ապա ինչ է հարկաւոր...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես ասացի՝ գործել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Բրաւո, օրիորդ Բերոյեանց, գործել է հարկաւոր, իսկոյն գործել, գնալ հիւանդներին օգնել... (Ծիծաղ:) Ինչ շարժուն էակ է, հրեշտակ է, հրեշտակ... (Բարձր) Օրիորդ Սոֆիա, մեր հայրերը երևի մեզ սպասում են պարտիզում...

ՍՈՖԻԱ

Միթէ կամենում էք գնալ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Օր. Բերոյեանցն ուզիղ է ասում՝ հարկաւոր չէ ի զուր ժամանակ կորցնել, հարկաւոր է գործել. իսկ մեզ հարկաւոր է գնալ պարտէզ... եթէ չեմ սխալվում ես այս ասում եմ ձեր հիւրերի .սրտից... նոքա էլ կը կամենան մեզ ընկերանալ... Այդպէս է, օրիորդ Բերոյեանց:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ուրեմն դուք չէք կամենում օրիորդ Սոֆիայի ցանած ծաղիկները տեսնել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես ծաղիկներ չեմ սիրում...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Անկարելի է...

ՍՈՖԻԱ, վեր կենալով։

Ճշմարիտ, գնանք պարտէզ... Պարոն Ջանումեանց, դուք կը գա՞ք։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ընորհակալ եմ, օրիորդ, ես գործերս չեմ վերջացրել...

ՍՈՖԻԱ

Ախ, հասկանում եմ... Բօզա, դուք կը մնաս ի հարկէ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ծպտալով։

Եթէ չես ուզում որ գամ, ուրեմն կը մնամ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ախ, ոչ, օրիորդ, դուք անշուշտ պէտք է գաք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ընորհակալ եմ, չեմ կարող...

ՍՈՖԻԱ, մի կողմ։

Ա՜խ... տոքա ուզում են մենակ մնալ այստեղ... (Քուչչ) պարոն Ջանումեանց, ուրեմն գնացէք, վերջացրէք գործերը, ձեզ կը սպասենք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ձեր տանը գործերս վերջացրի, ուրիշ տեղ էլի գործ ունիմ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ուրեմն շտապեցէք, պարոն Ջանումեանց... Ֆտեսուլթիւն, կարելի է այստեղ չը տեսնուինք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ուրիշ տեղում կարող ենք տեսնուել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ծիծաղելով։

Այո, Ֆաճկաստանի հայերին քոլերայից ազատելով... խա, խա... Օրիորդ Սոֆիա, համեցէք առաջ, ցոյց տուէք ձեր պարտիզի ճանապարհը...

ՍՈՖԻԱ

Գնանք... (Մի կողմ։) Սոքա դեռ այստեղ են... (Մի քանի վայրկեան պատանեան մեջ է, յանկարծ շուտ է գալիս և գնում մեջքին դռնով։ Բարսեղ Աթոյեանցը նորան հետևում է, օրիորդ Բերոյեանցին յետոյ շարժմամբ քարկոծելով։)

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Գուլեանցի տան մի եւ նոյն հիւրասենեակը։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ԾԱՌԱՑ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Իսկոյն բերել տուէք այս դեղը եւ մի ժամից յետոյ թոզ մեծ գդալով խմէ։ (Ծառան վերցնում է ընդունում է դեղի մնջին դոները։) Ասացէք որ ես էլի կը գամ նրան տեսնելու։ (Ծառան դուրս է գնում։) Այսպիսով էլ ոչինչ չի դուրս գալ։ (Մոթենում է սեղանին եւ վերցնում է ի-ը գլխարկը։) Աշխարհումս դեռ էլի կան պարզամիտներ, որոնք կարծում են թէ աշխատող եւ պարապող մարդու համար հեշտ է իւր գործերը կարգի բերել... Քանի ապրում ես, այնքան ուսելի համոզվում ես որ թէ զաշտոն ստանալու եւ թէ պրակտիկա ունենալու համար, հարկաւոր է անպատճառ բժշկապետի դիպլոմ ձեռք բերել... Այո, այս շատ կարեւոր բան է... եւ որքան կարելի է շուտով, թէ չէ օր օրի յետաձգելով ժամանակը կ'անցնի եւ ով է իմանում թէ վերջն ինչ հետեւանք կ'ունենայ... Վերջապէս սա մի ապահովութեան հարց է, որին

ամէն մէկ մարդ պէտք է ձգտի... Որը եւ չքաւոր տեղովս մինչեւ այստեղ դուրս եմ տարել գլուխս, հարկաւոր չէ կէս ճանապարհի վերայ կանգնել... Եթէ լինելու է, թող լինի, աւելորդ պատառը փորը չի ծակիլ... գոնեա այն ժամանակ քեզ համար ապահով եւ հանգիստ կ'ապրես... այն ժամանակ հեշտ կը լինի իրագործել այն դաղափարները, որ պրտրտում են գլխիս մէջ... Ուրեմն պէտք է շտապել... (Դուրս է գալիս ժամացույցին։) Այո, պէտք է շտապել... խընդիրը շատ պարզ է... Դեռ գնամ հարկաւոր գործերի, յետոյ... (Գնում է դէպի մնջին դոները եւ կանգնում է։) Արդեօք չեմ ուշանալ... լաւ չէր լինիլ եթէ իսկոյն պարզէի հարցը... Էհ, փոքրոգութիւն է... բժշկին հարկաւոր է հաստատակամ լինել։

ԾԱՌԱՑ, դուրս գալիս ոչ դոնից։

Պարոնը ձեզ խնդրում է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, դէ ինչ։

Մի եւ նոյն խնդրի համար երեւի... խա, խա... ինչ պարզամիտ մարդ է... (Ծառային։) Ո՞ւրտեղ է պարոն Գրիգորը...

ԾԱՌԱՑ

Իրա սենեակումն է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Շատ լաւ... (Դէ ինչ։) Կ'երթամ հանաքներ անելու նորա հետ։ (Դուրս է գնում յոկ դոնից։)

ԾԱՌԱՑ

Համեցէք։ (Ճանապարհ է յգում մնջեւ դոները եւ դուրը յեռ դնելով յեռ է գալիս։)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ԾԱՌԱՅ։

ՍՈՖԻԱ, դուրս գալով աջ դռնից։

Հայրս տանն է՞...

ԾԱՌԱՅ

Այո՛, պարոն դոքտորն է նրա մոտ։

ՍՈՖԻԱ

Պարոն Ջանումեանցը...

ԾԱՌԱՅ

Այո՛։

ՍՈՖԻԱ, մի կողմ։

Երևի գործը վերջացնելու համար... (Ծառային։) Պարոն Ջանումեանցն ինձ չը հարցրեց։

ԾԱՌԱՅ

Ոչ...

ՍՈՖԻԱ

Եւ... ոչ ուրիշին...

ԾԱՌԱՅ

Հիւանդի տեսութիւն էր եկել, պարոնն իմացաւ որ այստեղ է, հրամայեց խնդրել իրան մոտ։

ՍՈՖԻԱ, մատնանշելով ձեռքը։

Լաւ... (Ծառան դուրս է գնում։) Այո՛, գործը վերջացնելու համար է կանչում իւր մոտ... Ա՜խ, որքան անբաղդ եմ ես... ինչու, ինչու ես այն օրը չը կարողացայ իմանալ բոլորը և վերջ դնել իմ տանջանքներին... Այս ինչ անտանելի դրութիւն է Տէր Աստուած... (Նեղսրտած նստում է գահոյքի վերայ։)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, մտնելով ձեռքն դռնից։

Էլի քիթ ու մռութդ կախ ես արել...

ՍՈՖԻԱ

Է՜հ, Բոզա, երանի՞ քեզ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Թող թէ Աստուած կը սիրես... Մէկ լսէր ինձ թէ ում տեսայ ես ուսումնարանում...

ՍՈՖԻԱ

Ինձ հարկաւոր չէ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ապա՛ իմացիր, դրաղ կը գամ որ չես իմանալ...

ՍՈՖԻԱ

Ա՜խ, Բոզա... ես ի՞նչ գիտեմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Չէ, պէտք է իմանաս...

ՍՈՖԻԱ, դրուած։

Երևի Եպիսկոպոս...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այդ է որ չիմացար...

ՍՈՖԻԱ

Ուրեմն վարդապետ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ...

ՍՈՖԻԱ

Դէ՜հ քահանայ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ո՛չ, ո՛չ...

ՍՈՖԻԱ

Է՜հ, չեմ իմանում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Հէ՛, պէտք է ասես։

ՍՈՖԻԱ

Ա՜խ, Բօզա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ասա՛, ասա՛ տեսնեմ...

ՍՈՖԻԱ

Գուցէ Ջանումեանցն էր...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ... չիմացար... Բարսեղ Աթոյեանցին տեսայ...

ՍՈՖԻԱ, *ցաւագած։*

Բարսեղ Աթոյեանցին...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Իսկ և իսկ նորան, Բարսեղ Աթոյեանցին... (*Ծը-ռում է*)։ Զարմանալի է, չէ՞, Սոֆիա, բայց ես նորան այնտեղ տեսայ։ Երևակայիր քեզ... մտնում եմ դահլիճը, մօտենում եմ տեսչին, իրաւունք եմ խնդրում ներկայ գտնուելու հարցաքննութիւններին, նա ինձ ուրախութիւն է յայտնում, և շուռ եմ գալիս որ ինձ ցոյց տուած տեղի վերայ նստեմ, յանկարծ տեսնեմ, ի՞նչ տեսնեմ... աչքերս պատահում են Աթոյեանցի աչքերին... նա ժպտում է...

ՍՈՖԻԱ

Զարմանալի է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Յետոյ տես թէ ինչ ասաց ինձ, երբ ես նորան հարցրի այնտեղ լինելու պատճառը... Գիտէի ասաց, որ դուք այստեղ կը լինիք և ես եկայ... «դուք» շեշտելով ասաց...

ՍՈՖԻԱ

Ընդհանրապէս եմ քեզ յաղթութեանդ համար...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ի՞նչ... յաղթութիւն... դու հանաք ես անում, Սոֆիա, դու ինձ այնքան ցիմար ես կարծում որ միայն նորա հաւանելուն եմ արժանացել...

ՍՈՖԻԱ

Նորա հաւանելուն... ա՜խ... ի՞նչ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սպասիր... իրօք կարծեցիր...

ՍՈՖԻԱ

Ո՛հ, ի՞նչպէս կարելի է... Անգին իմ Բօզա, քեզ մաւելի մեծ երջանկութիւն է սպասում։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այդ խօսքեր են, որով կամենում ես ծածկել միտքդ... Պարզիր, խնդրեմ, թէ չէ քեզանից ձեռք չեմ վերցնիլ։

ՍՈՖԻԱ

Ես այդպէս կամեցայ հասկանալ նորա այցելութիւնը հայոց ուսումնարանին, որի մասին գաղափար էլ չունի։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ընդհակառակն... նա այն օրն այստեղ էր երբ

դու Ջանումեանցին ասացիր թէ մտադիր ես գնալ Հարցաքննութեան, նա էլ եկել էր...

ՍՈՖԻԱ

Ուրեմն ինձ տեսնելու համար... (Ծիծաղում է։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Գուցէ...

ՍՈՖԻԱ

Ոտով գլխով քեզ եմ տալիս նորան. նա ինձ հարկաւոր չէ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, վեր է կենում։

Հարկաւոր չէ՞... տեսնենք... նա հիմա գալու է այստեղ...

ՍՈՖԻԱ

Ա՞յստեղ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո, այստեղ... ասաց կը գամ... երևի քեզ տեսնելու համար... Այո, Սոֆիա, դու կարելի է չես նկատում, բայց նորա շուտ շուտ այցելութիւնն այստեղ ի զուր չէ...

ՍՈՖԻԱ

Այս օրերս նա աւելի քեզանով է զբաղուած...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Օհո, նախանձում ես... բայց էլի կ'ասեմ որ նա քեզ տեսնելու համար է գալիս։ (Մոտենալով Սոֆիային ծիծաղում։) Գիտես որ Թիֆլիսում ուրիշ կերպ է այդ հասկացվում։

ՍՈՖԻԱ

Ի՞նչ բան...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Նորա շուտ շուտ այցելութիւնը...

ՍՈՖԻԱ

Մի՛թէ... Ուրեմն Ջանումեանցի այցելութիւնն էլ այդպէս պէտք է հասկանալ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ի՞նչու համար... Ջանումեանցը ձեր տան բժիշկն է... նորա այցելութիւնն ուրիշ է...

ՍՈՖԻԱ

Հը՞մ... այդպէս է եղել ուրեմն...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սոֆիա, ես քեզ չեմ հասկանում...

ԾԱՌԱՅ, մտնելով։

Պարոն Բարսեղ Աթոյեանց։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Տեսար...

ՍՈՖԻԱ

Ասացէք որ տանը չենք։ (Ծառան դուրս է գնում։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սպասեցէք... Սոֆիա, անքաղաքավարութիւն է քո կողմից։ Ես նորան ասել եմ որ տանն ես։

ՍՈՖԻԱ

Շատ սխալուել ես...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սոֆիա, հայրդ զորձ ունի։

ՍՈՖԻԱ

Չեմ կարող ընդունել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Դռան մոտ:

Խնդրեցէք այստեղ պարոն Ալթոյեանցին: (Դռան դուռը է գնում:)

ՍՈՖԻԱ

Ես նորան չեմ ընդունիլ:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես կ'ընդունեմ նորան քո տեղը...

ՍՈՖԻԱ

Իրաւ... բարով վայելես: (յանկարծ վեր է կենում սեղանից և դուրս է գնում ներսի սենեակը:)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Սոֆիայի ետևից:

Սոֆիա, դու յուզուած ես...

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ:

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, պօրտֆէլը ձեռքին դուռ մտնում է:

Ա՜խ, օրիորդ, որքան ուրախ եմ ձեզ կրկին տեսնել:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սոֆիան ներողութիւն է խնդրում որ չէ կարող ձեզ տեսնել... այսօր փոքր ինչ տկար է: Համեցէք... (Նստում են՝ օր Բերոյեանցը գահաւորակի վերայ. իսկ Բարսեղ Ալթոյեանցը մօտիկ աթոռի վերայ, գլխարկն ու պօրտֆէլը նախապէս դնելով լամբերի սեղանի վերայ:)

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, Դառնալով:

Դուք այստեղ էք ինձ մօտ, ես բաւական եմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ի՜րաւ... մեծ պատիւ է ինձ համար... Սակայն ինչ բանին եմ պարտական ձեր ուշադրութեան համար, չէ որ ես մի գիւղական վարժուհի եմ:

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ուզում էք որ ասեմ... Ձեր գեղեցկութեան, օրիորդ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոհ, այդ չափազանցութիւն է... Գիւղացին գեղեցիկ չի կարող լինել...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Դուք բացառութիւն էք կազմում... դուք շատ գեղեցիկ էք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Դէ լաղմ:

Այս զուարճախօսութիւն չէ. այս թշուառականի աչքերը գաղանի պէս են փայլում: (Բարձր) Պարոն Ալթոյեանց, մի՞թէ դուք օրիորդի հետ խօսելու ուրիշ առարկայ չունիք... Ի՞նչպէս հաւանեցաք այս օրուան հարցաքննութիւն...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Հարցաքննութիւնն այն բոպէից լաւ դարձաւ, երբ ես ձեզ այնտեղ տեսայ... Ես կարող եմ գնահատել և՛ հարցաքննութիւնն և՛ ձեր գեղեցկութիւնը, թոյլ տուէք որ ես այդ անեմ, որովհետև գիտեմ գնահատել օրիորդի գեղեցկութիւնը:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ, ոչ, խօսեցէք հարցաքննութեան մասին, իսկ գեղեցկութիւնը մի կողմ թողէք...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ի՞նչու համար...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Որովհետև աւելորդ է... Գիւղը որ գնամ գուցէ այնտեղ էլ ուզենամ այդ տեսակ բաներ լսել, բայց այնտեղ ձեզ պէս մարդիկ չը կան, այնտեղ պարզապէս մարդիկ են։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Դուք գիւղն այլ եւս չէք գնալ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Միթէ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Հաւատացնում եմ... Ո՞րքան ռոճիկ էք ստանում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ձեզ ի՞նչ է հարկաւոր։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Կ՚ուզէի իմանալ... խնդրեմ ասացէք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Զատ հետաքրքիր է... ամսական քառասուն ռուբլի...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ, շնչաբռնութեամբ։

Ասացէք խնդրեմ, վայել է ձեզ պէս մի օրիորդի որ այդ չնչին վարձատրութեան համար նուիրէ իւր անձը գիւղին։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ինձ համար այդ մեծ ուրախութիւն է...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Եթէ այդ դումարի քառապատիկն այստեղ ստանայիք՝ աւելի մեծ ուրախութիւն կը լինէր, չէ՞...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Եղած են ինձ այստեղ այդչափ դումարի առաջարկութիւններ, բայց գիւղում ծառայելը գերադասել եմ։

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Թոյլէք վերջապէս կեղծաւորել. այդ բանը ձեզ սազ չի գալիս... Համաձայնեցէք որ դուք առաքեալ չէք և ձեզանով հայի տունը չի շինուիլ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ծիծաղելով։

Օհ՛... ինչպէս երևում է ձեր սիրտը շատ է ցաւում հայի համար։

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ապա, ինչ էք կարծում... ի հարկէ ցաւում է իբրև մի հայ մարդու...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ծիծաղելով։

Հայ մարդու...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ի՞նչու էք ծիծաղում... որ ես մեծ մեծ չեմ խօսում և չեմ կեղծաւորում, ենդուր կարծում էք որ հայ չեմ... Ոչ ես հայ եմ և ինձ ցոյց կը տամ այն ժամանակ երբ կեղծ ազգասէրները այն գոռում—գոչում բարձրացնողները վերջապէս կը մերկանան հասարակութեան առաջ իւրեանց սուտ և կեղծաւոր ազգասիրութեամբ։ Բայց այժմ, դուք ինքներդ լաւ գիտէք որ դոցա գործերը, բղաւոց—ճղսւոցը, բոլորը կեղծաւորութիւն է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ծիծաղելով։

Դուք էք ուրեմն միայն անկեղծ գործում...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Միթէ գործ սիրողը պէտք է սահմանափակէ իւր գործունէութեան շրջանը միայն ազգով... Միթէ

Թիֆլիսի մէջ ուրիշ գործ չը կայ անելու, բայց դոցա համար այն ինչ որ ազգային չէ, ատելի է... Հին ծանօթներին մոռանում են. նորերը՝ Իւրեանց շրջանից դուրս, նոցա համար չը կան... Ոչ, դոքա հայեր չեն... Հայերը միշտ կոսմոպոլիտ են եղած, ամէն ազգի հետ յարաբերութիւն ունեցել են, Իւրեանցը նոցա հաղորդել, նոցանը սեպհականացրել և այսպէս կառավարուել են յընթացս շատ տարիների... բայց դոքա... ֆը՛ու... մոլեռանդ, չարագէտ, նախանձոտ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Այդ չափազանցութիւն է, պարոն Աթոյեանց... Ինչ կ՚ուզէք, ասացէք նոցա մասին, բայց և այնպէս դոցա շնորհիւ է որ այժմ Թիֆլիսը փոքր ինչ հայացաւ, ժողովուրդը ճանաչեց իւր հայ լինելը, ձգտում է պահպանել դերդաստանի մէջ հայկական յատկանիշը...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Մեքենան լարուեցաւ։ (Բարձր) Ընդհակառակը, դոքա զրգռում են նոցա մոլեռանդութիւնը, շոյշոյում են նոցա նախապաշարմունքներն, որ նոցա հաճոյանան... Ո՛չ, մի խօսէք նոցա մասին... Մի օրինակով ձեզ կը բացատրեմ նոցա կեղծաւորութիւնը... Թող, թող այժմ վեր կենան գնան Հայաստան քոլերայի առաջն առնելու... թէկուզ հէնց պարոն Ջանումեանցը... ասացէք խնդրեմ կ՚երթայ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ինչ գիտէք որ չի գնալ...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Եթէ դուք հաւատում էք, ես կասկածում եմ,

որովհետև նոցա մէջ իսկապէս սրտացաւ հայ մարդ չեմ տեսնում... Դուք, օրիորդ, ուրիշ էք... դուք էք իսկական հայ որ Թիֆլիսը թողած գեղէ գեղ էք ընկել ձեր գործունէութեամբ օգնելու խեղճ հայ ժողովրդին... Ձեզ հետ կեանքը ցանկալի է... ահա, այժմ, խնդրում եմ ձեզ մնալ այստեղ, որովհետև ձեզ հետ կարելի է գործել...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Այստեղ մնալ չեմ կարող, շնորհակալ եմ խորհրդիդ համար...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Մինթէ ձեզ պէս մի չքնաղ օրիորդ պէտք է հեռանայ մի յետ ընկած գիւղ և պէտք չէ գործէ այսպիսի մարդաշատ քաղաքում։ Դուք այնտեղ կը փտիք անգիտութեան մէջ և վերջ ի վերջոյ մի քահանայ կամ մի որևէ հոգաբարձու կամենալով ձեր տեղը նշանակել իւր բարեկամին, կը սկսէ ձեր դէմ ինտրիգաներ, դաւադրութիւն և ձեզ հայհոյած և կշտամբած՝ կ՚արտաքսեն դպրոցից... Օրիորդ, ինչ էք մտածում...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ոչինչ, ես ձեզ լսում եմ...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Բանս լաւ է գնում... (Բարձր։) Ուրեմն, ընդունում էք իմ առաջարկութիւնը...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Չեմ իմանում թէ ինչ է ձեր առաջարկութիւնը։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՔԻ, ԳՈՒԼԵԱՆՑ։

ԳՈՒԼԵԱՆՑ, մտնելով յոլո դռնից։

Ա՜խ, պարոն Աթոյեանց, որքան ուրախ եմ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, վեր թենալով մի կողմ։

Խանգարեց անիծեալը... (Բուրջը) Բարև պարոն Գուլեանց։

ԳՈՒԼԵԱՆՑ

Դուք այստեղ էք եղել և ինձ ոչինչ չեն ասում...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ես այս րոպէիս միայն եկայ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Շատ ուրախ եմ, շատ... Համեցէք, նստեցէք։ (օր. Բերոյեանցին։) Ո՞րտեղ է Սոֆիան...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Իւր սենեակումն է... փոքր ինչ տկար է։

ԳՈՒԼԵԱՆՑ

Մի՞թէ... (Բ. Աբոյեանցին։) Աղջկերանց գործը ես չը հասկացայ. փոքր ինչ գլուխը կը ցաւի՝ ասում են տկար ենք։ (օր. Բերոյեանցին։) Գլուխն է ցաւում, հմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո... (վերջնում է ալքոմ և ընկնում է։)

ԳՈՒԼԵԱՆՑ

Գիտէի որ այդպէս կը լինէր, թէ չէ առաւօտեան նա իրան լաւ էր զգում։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ոչինչ, միւս անգամ պատիւ կ'ունենամ նորան տեսնել...

ԳՈՒԼԵԱՆՑ, յոյս տալով ալեոտ վերայ։

Համեցէք, պարոն Աթոյեանց, նստեցէք։ (Նստում է։)

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, վերցնելով գլխարկը և պօրտֆէլը։

Շատ շնորհակալ եմ... կ'ուզէի գնալ։ Այս րոպէիս միայն դատարանից եմ գալիս։ (յոյս տալով պօրտֆէլի վերայ)։ Այստեղ հետս մի շատ ծանր գործ ունիմ պաշտպանելու, կ'ուզեմ նրան լաւ ուսումնասիրել։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ինչպէս կամենաք, ես արգելք չեմ լինիլ ձեզ։ Կարելի է որ այդ գործով ձեր համբաւը մէկն երկուսով աւելանայ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ո՜հ... դուք ինձ շողոքորթում էք...

ԳՈՒԼԵԱՆՑ, վեր թենալով։

Ես չեմ միայն ասողը... այսպէս էէ, օրիորդ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ գլուխը ալքոմից չը բարձրացնելով։

Այո, պարոնը երևելի փաստաբան է իւր ընկերների։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ես փաստաբան եմ ճշմարտութեան։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի հարկէ, ի հարկէ, ի՞նչ ասել կ'ուզէ։

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Մնաք բարև, պարոն Գրիգոր... Օրիորդ, ցտեսու-

թիւն. (Մոտենում է օրիորդին և ասում) Միւս անգամ կը շարունակենք մեր խօսակցութիւնը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ցտեսութիւն, պարոն Ամոյեանց։ (Ճանապարհ է տալիս դեպի դուռը և վերադառնում է։)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Այս ի՞նչ նոր կարգ է հնարել Սոֆիան որ դուրս չէ գալիս հիւրերի մօտ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այսօր նա շատ յուզուած է երևում։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի՞նչ է պատահել։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ինքս չեմ հասկանում...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի՞նչ էր խօսում ձեզ հետ Ամոյեանցը։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ո՞վ է իմանում...

ԳՈՒԼԵԱՆՑ

Սոֆիայի մասին բան խօսեցաւ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչինչ։

ԳՈՒԼԵԱՆՑ, մի կողմ։

Չեմ հասկանում այդ մարդու բանը։ (Քաջալերելով) Ա՜խ,

օրիորդ, Սոֆիայի տկարութիւնը սրտիս մէջ ցաւ ձգեց... Գնացէք, խնդրեմ իմացէք, գուցէ նրան բժիշկ է հարկաւոր, կանչել տուէք Ջանումեանցին։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Նրան բժիշկ հարկաւոր չէ։ (Դուրս է գնում։)

ԳՈՒԼԵԱՆՑ

Չեմ սիրում երբ տան մէջ այս տեսակ անկարգութիւն է լինում։ Հիւր է եկել կամ պէտք է ընդունել, կամ թէ չէ ասել որ տանը չենք... Հիմի ի՞նչ կը կարծէ երիտասարդ մարդը։

ԾԱՌԱՅ, մտնելով։

Պարոն Ամոյեանց։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ո՞ը... ծե՞ը...

ԾԱՌԱՅ

Հրամերէք...

ԳՈՒԼԵԱՆՑ

Վա՜հ, գնա՛ խնդրիր։ (Ծառան դուրս է գնում։) Լսէ՛ր, ասա՛ որ մեզ համար սուրճ պատրաստեն։ (Ծառան դուրս է գնում։) Երիտասարդը նոր դուրս գնաց այստեղից. այժմ նրա հայրը... այս մեծ պատիւ է...

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Զը սխալուեցայ, պարոն Գրիգոր, դուք տանն էք եղել...

ԳՈՒԼԵԱՆՑ, ---Ջ գնալով։

Թանկագին հիւրերի համար ես միշտ տանն եմ։ Համեցէք։ (Դոպոյնով է Լոխոպի վերայ մեջտեղ պոչը մոռ-Լոտոյ դնելով. ինչն էլ նրա հոշտին է նոպոմ։)

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, Դոպէչով։

Անց էի կենում քարվանսարայի կողմ, հարցրի ձեր մասին, ասացին թէ դեռ չէք եկել...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ճշմարիտ է... ես այսօր տանիցս դուրս չեմ գնացել. գործ ունէի, մնացի։ Բայց դուք ինչ պատճառով էիք գնացել փողոց։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Պարապ մարդու բանը ձեզ լաւ յայտնի կը լինի... Գործ ունէի Հալաբարում, գնացի ու յետ գալիս Սիօնի փողոցով հարցրի ձեր մասին, ասացի մէկ նրան էլ տեսնեմ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Շատ շնորհակալ եմ հարցնելու համար։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ինչպէս է պատահել որ կանտօրդ գործակատարների յուսով էք թողել։

ԳՈՒԼԵԱՆՑ

Է՜հ, պարոն Սիմօն, էլ ո՞րտեղ է առուտուր որ տէրն էլ վրէն աչք ունենայ։ Առուտուրը փչացաւ, էլ բաղդաւոր քաղաք չէ մեր Թիֆլիսը։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Առուտուրը փչացել է, այդ ճշմարիտ էք ասում... Ես ինքս այսօր շատ բան իմ աչքովս տեսայ՝ վաճառականները ձեռքերը ծալած կանգնած են իրանց խանութների առաջ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Կանգնած են ու մնում են մուշտարու... Այո՛, ծանր ժամանակ է։ Ով որ խելք ունէ, աշխատում է իրա առուտուրը պակասեցնել որ կարողանայ գոնեա փողի շահը քիչ տալ. այն ինչ որ կորչում է ուրիշների վրայ, այն չեմ հաշվում։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ի՞նչ էք հրամանք անում։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ուրիշ կերպ անկարելի է... Վաղ ժամանակ բոլոր Նիժնան ու Մոսկովը մեր ձեռին էր, հիմի բանկից հեշտ հեշտ փող են դուրս բերում և մէկ հազար ռուբլու տէրը ինքն է գնում ու իրա համար ապրանք բերում. նրանց բաղդիցն էլ ճանապարհը հեշտացաւ՝ մի ամսուայ ծանր ու դժուար ճանապարհը վեց-եօթն օրուայ դառաւ... Գնա՛ ու հիմի առուտուր արա... Մենք էլ հիմի ձեզ, աստիճանաւորներին, երանի ենք տալիս ու բաղդաւոր համարում...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ճշմարիտ է ժամանակը վատացել է։

ԳՈՒԼԵԱՆՑ, ---ոգ-որ-ելով։

Ես ձեզ հաւատացնում եմ որ շատ չի անցնիլ և մեր բոլոր վաճառականները ստիպուած կը լինին դադարեցնել իրանց առուտուրը և մի կողմ քաշուիլ՝ կտոր հացի կարօտ...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Է՜հ... ինչ էք հրամայում...

ԳՈՒԼԵԱՆՑ, նոյնպէս։

Աբա ինչ անէ... Ո՞ր մէկին դիմանայ, — բանկից դուրս բերած փողի շահին, խանութի վարձին, թէ գործակատարների ռոճկին ու կորած փողին... դրբ-սիցը փող պէտք է տուն դայ որ նա պտոյտ ածէ... Հիմի գանք տան տարք ու կարգին, մեծ ու լայն ապրուստին, շռայլ նիստ ու կացին... չէ որ այս բոլորի համար փող է հարկաւոր, բայց հիմիկուայ առուտուրը մեզ այդ չէ տալիս։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Այս ինչեր է դարսում առջևս այս մարդը։ (Բարձր) Ձեր բանը ինչպէս է, պարոն Գրիգոր։ Վերջին պատերազմին, կարծեմ, ձեր գործը լաւ յաջողակ էր։

ԳՈՒԼԵԱՆՑ, ինչ ժպիտով։

Է՜հ, գոհութիւն Աստուծոյ կառավարվում ենք... Այնքան ունեցայ որ աղջկանս ուսում չը պակսացրի։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Փառք ու պատիւ ձեզ. այդ կողմից դուք չեղած հայը էք եղել ձեր տղջկայ համար, նրան լաւ էք կրթել... Բարսեղս շատ է գովում ձեր աղջկան...

ԳՈՒԼԵԱՆՑ

Է՜հ, փառք Ստեղծողին... այստեղից, այնտեղից իմանալով կատարել ենք մեր պարտքը...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ոչ, ուրիշներից շատ էք արել... Բարսեղս ուսումի բանը լաւ գիտէ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ձեր որդին հիմի այստեղ էր...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ճանապարհին տեսայ... Գիրք էր բերել աղջկանդ համար կարդալու։

ԾԱՌԱՑ, մտնելով։

Սուրճը պատրաստ է, կամենում էք այստեղ բերեմ։

ԳՈՒԼԵԱՆՑ

Հա՜... ինչպէս էք կամենում...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Որտեղ կը հրամայէք... Ես մի բան ունէի ձեզ ասելու, թէ մեզ այստեղ արգելք չեն լինիլ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ուրեմն գնանք իմ սենեակը։ (Ծառային։) Բեր իմ սենեակը։ (Ծառան գնում է։) Համեցէք...

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ, վեր կենալով։

Այո՛, պարոն Գրիգոր, դժուար ժամանակ է...

ԳՈՒԼԵԱՆՑ, վեր կենալով։

Դժուար է այո՛... բայց մարդ որ հեռուից նայում է մեր ապրուստին այնպէս է կարծում թէ մեզանից աւելի բաղդաւոր ժողովուրդ աշխարհքում էլ չկայ... Այս է մարդուս նեղացնում։

ՍԻՄԷՕՆ ԱԹՈՅԵԱՆՑ

Ինչ պէտք է արած... Մենք թէ մեզ համար ենք ապրում, թէ ուրիշների համար...

ԾԱՌԱՑ, մտնելով։

Սուրճը պատրաստ է...

ԳՈՒԼԵԱՆՑ

Համեցէք։ (Գիմում են դէպի դուռը. Ծառան նոյա ա-ռաջ թռչ է ոտում դուռը, Գուլեանցը Սիմէոն Աթոյեանցի ձեռքով գցած է-ը յուր յեռուը, ալ յեռուվ նորա յեռը բռնած

պառա՜ռ է. դառնէրա՜ռ ապրող նորան է նէրա հրա՜էրա՜ռ, յեռոյ ինչը մնառա՜ ու դա՜ռը փակա՜ռ։ Ծառան յեռ է գալիս։)

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ԾԱՌԱՑ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, մտնելով մէջէն դառնիկ։

Ո՞վ է պարոն Գրիգորի մօտ։

ԾԱՌԱՑ

Սիմէօն Աթոյեանցն է։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ Սոֆիան տա՞ն է...

ԾԱՌԱՑ

Այո՛, իրա սենեակումն է,

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Իմաց տուէք օրիորդին որ ես եկել եմ և կուզեմ տեսնել։ (Ծառան ուրա՜ռ է գնում։) Լսեցէք... դեղը բերել տուի՛ք...

ԾԱՌԱՑ

Այո՛, նա արդէն խմեց։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Շատ լաւ, գնացէք, իմաց տուէք օրիորդին։

ԾԱՌԱՑ

Իսկոյն։ (գնա՜ռ է մէջէն դառնիկ։)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Սիմէօն Աթոյեանցն է... Մի թէ ուղիղ է, ինչ որ թիֆլիսումն են խօսում... Չեմ հասկանում։ (մտածա՜ռ է։) Ուրեմն, այժմ այն սենեակումը երկուսը

նստած առուտուր են անում. նոքա պէտք է վերջացնեն ամուսնութեան գործը որին պէտք է ենթարկուի մի անձն որ թերևս ինքը չէ կասկածում այդ մասին։ Ոչ, ոչ, անկարելի է... այդ բանը գլուխ գալու չէ... Պէտք է վերջ դնել այս տարտամ և ապարդիւն ակնկալութեանց և ձեռք բերել այն ինչ որ երկու տարի ես փայփայել եմ... Այո՛ պէտք է... լի յուսով և հաւատով ճակատագրիս վերայ՝ ես կը խոստովանիմ նորա առաջ այն ինչ որ սրբութեամբ մինչև այս օրս պահում էի սրտիս մէջ... Ուշացնել էլ հարկաւոր չէ։ Այսօր կամ վաղը եթէ հարցը վրճռուի, այն ժամանակ, այն ժամանակ միջոց էլ չեն տալ ինձ ղղջալու համար... (ուռհանգիսա մտնում է գալիս։)

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, նէրա գալով։

Բարև, պարոն Ջանումեանց։ (մոթենում է)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, այլայլած կանգնած է մի տեղում։

Բարև օրիորդ։ (մի կողմ։) Ես սորան չէի սպասում։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Դուք շփոթուած էք... (դրանց։) Այս ինչ է պատահել այսօր. նա այնտեղ թթուում է իւր սենեակում, դուք այստեղ քացխած երեսով էք ներկայանում։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդ ո՞վ է նա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ով պէտք է լինի... Սոֆիան... Առաւօտեանից մի քաղցր խօսք չը լսեցի նորանից, այնպէս է տրամադրուած որ ուզում է ամէնքի հետ կռուել. մինչև անգամ անքաղաքավարութեան է հասնում՝ մի ժամ առաջ Բարսեղ Աթոյեանցին չընդունեց, հիմի էլ չը կամեցաւ ձեզ մօտ դուրս գալ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, *ցածր ինքն իրան։*

Նախազգացումն... խեղճ Սոֆիա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ի՞նչ ասացիք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ոչինչ... Սակայն ինչ է նորա այդ տեսակ տրամադրութեան պատճառը։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Եթէ ասէր, կարելի է որպէս և իցէ նորան հանդրստացնել, բայց ոչինչ չէ ասում։ Միայն երևում է որ մի կասկած կրծում է նորա սիրտը... Ուզեցի այդ կասկածը բացատրել Բարսեղ Աթոյեանցի այստեղ շուտ շուտ գալու նպատակով, բայց կարծեմ սխալվում եմ... Կարելի է դուք էք իմանում, պարոն Ջանումեանց, թէ ինչու է նա այդպէս տրամադրուած։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ե՞ս... (մի կողմ։) Ի՞նչ ասեմ սորան, արդեօք կարող եմ սորան հասկացնել։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Դուք լռում էք, դուցէ գիտէք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ե՞ս... (*անորոշութիւն*) Ե՞ս... այո, ես իմանում եմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, *կասկածով։*

Մի՞թէ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, *ոգևորուած։*

Այո, օրիորդ, ես իմանում եմ, բայց դժուարանում եմ բացատրել թէ ինձ և թէ մանաւանդ նորան...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, *հեգնօրէն։*

Մի՞թէ այդքան ծանր բան է որ դժուարանում էք բացատրել թէ ձեզ և թէ մանաւանդ նորան... Զարմանալի է... խնայեցէք գոնեա նորան, նա կարող է հիւանդանալ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, *ոգևորուած շտապով քանում է*

օր. Բերոյեանցի յետոյը։

Դուք մի բան գիտէք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, *ուրմայմամբ նայելով նորան։*

Ես ոչինչ բան չեմ իմանում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, *դառնապէս բայ ընդնելով*

նորա յետոյը։

Ձէք իմանում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո, չեմ իմանում։ (*ծածկաբար*) Չը լինի թէ դուք էք մեղաւոր նորա այդ դրութեան...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ե՞ս... կարելի է... բայց խօսքը իմ մասին չէ, այլ նորա մասին է... Օրիորդ, նորան հարկաւոր է նախազգուշացնել, անպատճառ, եթէ կարելի է այսօր իսկ, ապա թէ ոչ յետոյ ուշ կը լինի։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Նախազգուշացնել... Ինչ բանից, պարոն Ջանումեանց:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ի՞նչ բանից... (Մի կողմ:) Ոչ, պէտք է ասել սորան: (Փոքր լռութիւնից յետոյ վերջնում է նորա յետոյը:) Օրիորդ, ես դառնում եմ ձեզ, իբրև կատարեալ մարդու, որ կարող է ինձ հասկանալ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, շփոթուած:

Ի՞նչ էք ուզում ասել:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մի՛ շփոթուիք, ազնիւ օրիորդ, այն ինչ որ ես պէտք է ձեզ հաղորդեմ կեանքի ու մահուան խնդիր է և ես ամենայն վստահութեամբ կարող եմ ձեզ վերայ յուսալ:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ամօթխածութեամբ:

Ասացէք, պարոն Ջանումեանց:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ընդունելով նորա յետոյը:

Դուք և միայն դուք, օրիորդ, կարող էք ինձ հասկանալ և համակրել... աղաչում եմ օգնել ինձ վճռել այդ ծանր խնդիրը:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ուրախ, մի կողմ:

Ա՜խ, Տէր Աստուած, միթէ... (Մօտենում է սեղանին, վերջնում է ալբօմ և սկսում է դողդոջուն յետոյով ընթերնել:)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Նստեցէք, օրիորդ: (Օր. Բերոյեանցը նստում է գահուորդի վերայ. Ջանումեանցը մօտիկ աթոռի վերայ:) Ուրեմն լսեցէք ինձ... Օրիորդ, դուք 12 տարեկան աղջիկ էիք երբ ձեզ յանձնեցին մեր ուսումնարանը: Այն

օրից ամէնքը հիացած էին ձեր յառաջադիմութեան վերայ... Ձեր կարդացած ճառերը և բանաստեղծութեանց ընթերցմունքը հանդէսների ժամանակ գրաւում էին շատերի ուշադրութիւնը, ի միջի այլոց և իմս...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, մի կողմ:

Ես այդ նկատում էի...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, շարունակելով:

Տասն և վեց տարեկան հասակում դուք աւարտեցիք ձեր ուսումը, բայց մենք վճռեցինք չը բաւականանալ այն ուսումով որ տուել էր ձեզ մեր ուսումնարանը: Գտնուեցան անձինք, որոնք յանձն առան ձեր կրթութեան հոգսը: Այս գործի մէջ մասամբ պարտական ենք Սոֆիային, որ վերջացնելով իւր ուսումը օտար դպրոցում, կամեցաւ սովորել հայերէն լեզու: Լաւ միջոց էիք դուք նորա համար՝ դուք երկուսդ փոխադարձաբար լցուցիք միմեանց ծարաւը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, սրտոնց:

Ես երբէք այդ չեմ մոռանալ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, շարունակելով:

Դուք արդէն կազդուրուած ուսմամբ և գիտութեամբ զգացիք ձեր մէջ գործունէութեան կարօտը և ոչ մի կերպով չը կամենալով գործել Թիֆլիսի մէջ, ցանկացաք օգտաւէտ լինել գիւղական հասարակութեան... Ձեզանից ամէնքը գոհ են...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես ինքս շատ գոհ եմ իմ վիճակից, որովհետև այդ տեսակ գործունէութիւնը դարձել է կեանքիս նպատակն որ դուք ինձ ներշնչեցիք:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ոչ միայն ես ներշնչել եմ, այլ և Սոֆիան, որի բարեկամութիւնն այս րոպէիս մենք երկուսս էլ վայելում ենք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես գնահատում եմ մեր բարեկամութիւնը։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես ևս, որովհետև այս տեսակ բարեկամութիւնը մարդկային յարաբերութեանց մէջ համարվում է ամենաազնիւ կապ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Որովհետև դա հիմնուած է գաղափարների փոխադարձ համակրութեան վերայ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ճշմարիտ է... Այժմ երբ այդ բարեկամներից մէկին վտանգ սպառնալիս լինի, ինչ պէտք է անեն միւսները։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Շատ հասկանալի է... պէտք է աշխատել հեռացնել նորանից վտանգը...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դա մեր սրբազան պարտքն է... Օրիորդ, Սոֆիան կարօտ է այժմ մեր օգնութեան։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սոֆի՛ան։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո... նորա այս օրուայ յուզուած դրութիւնը առանց պատճառի չէ... Հայրն ուզում է ամուսնացնել նորան Ա[illegible]ոյեանցի հետ և այդ հասկանալով երևի վհատել է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Բարսեղ Ա[illegible]ոյեանցի հետ... բայց մի՞թէ այդ ուղիղ է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դա մի զարհուրելի իրողութիւն է որ կարող է այս օրերս կատարուիլ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ, չեմ կարծում որ Սոֆիան ամուսնանայ նորա հետ։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Սոֆիան կարող է ընկնել թակարդի մէջ, եթէ մենք բարեկամներս նորան չօգնենք։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Գարոն Ջանումեանց, վերջապէս Սոֆիան նորան ատում է։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Սոֆիան սիրում է իւր հօրը և վախենում եմ որ նորան կը պակասի ոյժ, և չի հակառակիլ հօրը... իսկ հայրն այդ շատ է ուզում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ոչ, ոչ, Սոֆիան չի կարող և չը պէտք է դառնայ Ա[illegible]ոյեանցի ամուսին...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, [illegible]

Կը նշանակէ յաւիտեանս թաղել այն, ինչ որ նա ձեռք է բերել այս երկու տարուայ մէջ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո, պէտք է նորան ազատել։ ([illegible])

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Համոզեցէք նորան որ չը համաձայնի, ոչ մի կերպով չը համաձայնի։ Ասացէք որ այդ բանը ուզում է և՛ մի ուրիշը որ չի վստահանում նորան ուղիղ ասել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այսինքն դուք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Պատճառը...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Որովհետև... որովհետև...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ասացէք, պարոն Ջանումեանց։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Մի՞թէ կարող է այդպիսի մի ազնիւ օրիորդ Աթոյեանցի ամուսին լինել... մի՞թէ ես թոյլ կը տամ որ այս երկու տարուայ մէջ նորա ձեռք բերած գաղափարներն Աթոյեանցը մի օրում ոտնակոխ անէ... մի՞թէ Սոֆիան արժանի չէ մի այլ վիճակի...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Սա նորան խղճում է...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ոգեորուած։

Սոֆիան, այն գեղեցիկ անձնաւորութիւնը, որ իւր բարոյական շատ արժանաւորութիւններով, խնդրեմ ասացէք, մի՞թէ հազար Աթոյեանցներից բարձր չէ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ճշմարիտ է, նա արժանի է աւելի լաւ ապագայի...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, նոյնպէս։

Այո, օրիորդ, Աթոյեանից շատ բարձր անձինք իւրեանց երջանիկ կը համարեն կապել իւրեանց կեանքը Սոֆիայի հետ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Սա իւր մասին է ասում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, շարունակելով։

Մի անձի հետ որ իւր խելօք և ազնիւ զգացմունքներով շատ հազուագիւտ է մեր Թիֆլիսում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, մի կողմ։

Սա նորան սիրում է։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Օրիորդ, մի՞թէ ուղիղ չէ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, արտաբերելով։

Այո... (մի կողմ։) Այո սիրում է։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Եւ այդ մենք գիտենք...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո, փորձել ենք նորա ազնիւ ձգտումները...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ուրեմն...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ընդհատելով նորան։

Ես կ՚օգնեմ ձեզ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ուրախ։

Շնորհակալ եմ, օրիորդ... Սոֆիան այժմ ազատած է։ (ետ-ադարձով սեղմում է ձեռքը։) Շնորհակալ եմ, օրիորդ... (մի կողմ։) Փառք Աստուծոյ մի քայլ առաջ ենք արել։ (արագ դուրս է գնում մեջին դռնից։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ, մայր:

(Փոքր ժամանակ նայելուց Ջանումեանցի էսկիզը: Ես էս շնորհակալ եմ, պարոն Ջանումեանց. գոնեա ես ինքս կարողացայ փարատել իմ կասկածը... Այո, Ջանումեանց, եթէ իմանալիր որ աշխարհում կայ մէկ էակ որ քեզ զուցէ աւելի է սիրում, քան ուրիշը, դու ինձ այդ չէիր ասիլ... Սակայն թող գոքա բաղդաւոր լինին... բայց Սոֆիան սիրում է արդեօք սորան... Ինչպէս կարելի է չը սիրել այսպիսի մի աղնիւ և պատուական անձն... Եթէ սիրելիս էլ չը լինի, ես կը ստիպեմ նորան սիրելու... Ես նորան հանգստութիւն չեմ տալ... գիշեր ցերեկ սորա անունը կը տամ, ամենայն օր ես կը նկարագրեմ սորան, որ հիանայ սորա պատկերի վերայ, հիանայ սորա քաղցր խօսք ու զրոյցի վերայ, սորա անարատ հոգւոյ վերայ... Այո, այո, Սոֆիա, դու պէտք է սորան սիրես, որովհետև սա քեզ է սիրում... Այո, սիրում է, որովհետև այդ երևում է սորա ամէն մի խօսքից... Այո, Սոֆիա, դու պէտք է սիրես, ապա թէ ոչ—յաւիտեանս կը խռովեմ քեզանից... (գնում է փոքր ի չափ է ասում:) Իսկ ես... Ե՞ս ինչ... Ո՞վ եմ... Վարժուհի եմ ծխական դպրոցի և իմ կոտրած սիրտը կը լքցնեմ իմ աշակերտուհիների սիրովը...

ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Գուլեանցի գրասենեակը. ձախ կողմից դրած է գրասեղան իւր պարագաներով: Սեղանի առաջ կայ բազկաթոռ. զանազան տեղերում շարուած են էլի աթոռներ. աջ կողմում թախտ մութաքաներով: Սենեակը ունի երկու դուռ՝ մէջ տեղում եւ աջ կողմում:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍՈՖԻԱ, նստած սեղանի առաջ, գրիչը ձեռին,
ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, մտնելով:

Դու այստեղ ես եղել: (Սոֆիան լռագնում է իւր առաջ դրած լուսղիը և գրիչը վայր է ձգում:) Ո՞հ... նամակ ես գրում... Չը լինի Աթոյեանցին ես գրում...

ՍՈՖԻԱ, նեղացած:

Բաւական է Բօզա... մի փորձիր իմ համբերութիւնը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Դու նեղանում ես... չէ որ հօրդ սրտից եմ խօսում...

ՍՈՖԻԱ

Դարձեալ նոյնն ես կրկնում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես ի՞նչ անեմ որ Հայրդ շատ է ուզում ամուսնացնել քեզ Նորա հետ։

ՍՈՖԻԱ, վեր հենուլով։

Ա՜խ, Տէր Աստուած... Բօզա, ես քեզ արդէն ասել եմ ով էլ որ լինի իմ ամուսինը, միայն Աթոյեանցը երբէք չի կարող լինել... Այս մտքով էլ խօսել եմ Հօրս հետ և նա պէտք է հասկանար թէ ինչ է իմ ցանկութիւնը... Բաւական ես, էլ ինչ ես ուզում ինձանից...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Չէ երևում որ Հայրդ հասկանար քո ցանկութիւնը... «Ես, պապա, Աթոյեանցի հետ ամուսնանալու մասին չեմ մտածել»... Մինթէ այս պէտք է լինէր քո պատասխանը... «Չես մտածել—կը մտածես». ինքն իրան կասէր Հայրդ և իւր մտքում այդ հարցը կիսով չափ վերջացած կը համարէր...

ՍՈՖԻԱ, ցրուած։

Ես ուրիշ պատասխան չէի կարող տալ։ (Նստում է Ռախոյի վերայ։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Որովհետև դու մի անփորձ աղջիկ ես...

ՍՈՖԻԱ, Նեղացած։

Վերջապէս անտանելի է Բօզա... Ի՞նչ ես այս քանի օրս յետևիցս ընկել այդ քո Աթոյեանցով...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Ծպտալով։

Նա քո փեսացուն է...

ՍՈՖԻԱ

Գուցէ ուզում ես ինձ Նորա հետ անպատճառ ամուսնացնել, որ Նորա անունը այդպէս շուտ շուտ ես կրկնում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Նստելով։

Քա՜ւ լիցի... խօսքերս անկեղծ են... Ընդհակառակն ես չեմ ուզում որ դու Նորա հետ ամուսնանաս... և ոչ թէ մէնակ ես չեմ ուզում այդ, այլ և մի ուրիշը...

ՍՈՖԻԱ, հետաքրքրուած։

Այդ էլ ո՞վ է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Իմացիր ինքդ...

ՍՈՖԻԱ

Ես սիրտ չունիմ գուշակութիւններ անելու։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Որովհետև այդ քայլն անելով, դու ամենքի առաջ մեղաւոր կը մնաս...

ՍՈՖԻԱ

Ես ոչ ոքին պարտական չեմ հաշիւ տալ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Մինթէ... թէկուզ Ջանումեանցին... դու Նորան պարտական չես...

ՍՈՖԻԱ

Ես ոչ ոքին պարտական չեմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ապերաշխատ... իսկ նա սարսափում է որ դու այդ քայլը կ'անես և յաւիտեան կը թաղես քո ձեռք բերած գաղափարները...

ՍՈՖԻԱ

Ջանումեանցը սարսափում է որ այդ քայլը կ'անեմ... Հա, հա, հա... ծիծաղելի է...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո, ծիծաղելի է որ նա քո մասին աւելի է մտածում, քան թէ դու ինքդ...

ՍՈՖԻԱ

Ո՜հ ինչ մարդասիրական կարեկցութիւն է իմ դրութեանը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Դու այժմ տեսնում ես որ քո դրութիւնը կարող է կարեկցութիւն զարթեցնել ամէն մի ազնիւ սրտի մէջ։ (վեր է կենում։)

ՍՈՖԻԱ

Ես ոչինչ չեմ տեսնում և չեմ հասկանում, Բօզա... Թող ինձ խնդրեմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ձը մոռանաս որ հայրդ այսօր քեզանից պէտք է ստանայ իւր առաջարկութեան պատասխանը...

ՍՈՖԻԱ, վեր։

Բօզա, դու վիրաւորում ես ինձ այդ խօսքով...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ես յիշեցնում եմ քեզ քո պարտականութիւնը...

ՍՈՖԻԱ

Հակառակի՞լ հօրս...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ո՛չ... չը հակառակել քո դաղափարներին...

ՍՈՖԻԱ, վեր է կենում։

Բօզա, Բօզա...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սիրտ ա՛ռ և մի՛ խայտառակիր քեզ... (շտապով դուրս է գնում աջ դռնից։)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, մենակ։

(Գնում է և նստում է սեղանի առաջ։) Այո, պէտք չէ խայտառակուիլ... բայց ինչու համար... միայն նորա համար որ հարկաւոր չէ ոտնակոխ անել այն ինչ որ սուրբ էիր համարում... ուրիշ բացատրութիւն չը կայ... (գրում է նամակ։) Ոչ, այսպէս չեմ սկսիլ... (ճղում է նամակը և նորից է վերցնում։) Այո, այսպէս աւելի յարմար է. նա ինչ անէ որ ես նորան սիրում եմ... իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի իւր ընտրածին սիրել և նա սիրում է Բօզային... (շարունակում է գրել և կանգ է առնում։) Ա՜խ, որքան դատարկ է այս աշխարհը... սովածին հեռուից հաց են ցոյց տալիս, մինչդեռ նա պարտաւորած է թունաւոր բոյսեր ուտել. խեղդուողին օգնութիւն են խոստանում երբ նա մօտ է կուլ գնալու ալիքների մէջ... (գրում է, էլի կանգնում է։) Գաղափարնե՞ր... ո՞վ չունի գաղափարներ. ո՞վ կարող է ասել թէ մէկի գաղափարը միւսի գաղափարից գերազանց է... (գրում է խօսելով։) Այո, պարոն Ջանումեանց, միայն այն գաղափարները, որոնք հասարակութեան, ազգութեան և մարդկութեան են ծառայում, նոքա են լաւը և նուիրական... (կանգ են առնում։) Ո՞վ է... Ամոյեանց թէ

Ջանումեանց... (դառնապէս:) Ո՜հ, ոչ մէկը և ոչ միւսը ինձ հարկաւոր չեն... Ով որ է այստեղ է գալիս... (Ձայնով վեր է կենում գրած ընդունը և նրա հետ առնելով և դնում է դէպի աջ դուռը: Այս ժամանակ մէջն դռնից մտնում է Ջանումեանցը: Սոֆիան յետոյում բռնած ընդունը ճիչում է և դնում է գրպանը:)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, նկատելով հետաքրքրասէր Սոֆիային:

Օրիորդ Սոֆիա...

ՍՈՖԻԱ, շուտ գալով, ասում:

Բարև ձեզ, պարոն Ջանումեանց: (Ասում էր գալիս:)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Բարև, օրիորդ... դուք ինձ չէիք սպասում...

ՍՈՖԻԱ

Ե՞ս... ես ոչ ոքին չէի սպասում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես եկել էի ձեր աղախնիդ առողջութիւնն իմանալու, բայց ինձ ասացին թէ տանը չէ...

ՍՈՖԻԱ

Այո, նա բոլորովին առողջ է ձեր ղեղերի շնորհիւ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Գոհ եմ որ նորան օգտակար եղայ:

ՍՈՖԻԱ

Նա էլ շատ գոհ է ձեզանից...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ձառ ուրախ եմ...

ՍՈՖԻԱ, հեգնօրէն:

Պարոն Ջանումեանց, դուք ընդունակ էք մարդոց երախտագիտութիւնը վայելելու...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դուք ինձ ծաղրում էք...

ՍՈՖԻԱ

Ընդհակառակն. ես առաջինը պէտք է յայտնեմ ձեզ իմ շնորհակալութիւնն այն ցաւակցութեան համար որ դուք զգացել էք իմ դրութեան առթիւ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ձեր դրութիւնը մթթէ վտանգաւոր է...

ՍՈՖԻԱ

Դուք ինքներդ այդ պէտք է գիտենաք. գոնեա Բօզան այդպէս է ասում:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ճշմարիտ է... ես օրիորդին ասել եմ որ դուք կշռէք ձեր դրութիւնը:

ՍՈՖԻԱ

Ի՞նչու համար...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Յանուն այն գաղափարների որ դուք փայփայել էք այս երկու տարուայ մէջ:

ՍՈՖԻԱ

Գաղափարնե՞ր... Ո՜հ, ի՜նչ սարսափելի խօսք է... Պարոն Ջանումեանց, թողէք, խնդրեմ, մի կողմ այդ գաղափարները...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ուրեմն դուք ուզում էք ամուսնանալ Աթոյեանցի հետ...

ՍՈՖԻԱ

Ձեզ ինչ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ինձ ինչ... Հարցնում էլ ի՞նչ... Օրիորդ, աղաչում եմ յայտնել ինձ... ինձ այդ շատ հարկաւոր է...

ՍՈՖԻԱ, երկար ժամանակ նորան նայելով։

Պարոն Ջանումեանց, երևի դուք ինձ չէք ճանաչում որ կարծել էք թէ ես կարող եմ Աթոյեանցի ամուսինը լինել... Աշխարհի քանդուկը կարող էի սպասել, բայց ինձ տիկին Աթոյեանց տեսնել ոչ երբէք... Այժմ բաւական էք... նոյնն ասել եմ Բոզային, պակասը կարող էք նորանից իմանալ։ (Ո-ղ-մ է գնալ։)

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, նորան պահելով։

Սպասեցէք... ուզում էք գնա՞լ...

ՍՈՖԻԱ

Էլ ինչ էք կամենում... Դուք ուզեցիք որ ես չամուսնանամ Աթոյեանցի հետ, ձեր ցանկութիւնն ես կատարում եմ... Էլի բան ունի՞ք ինձ ասելու...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Բայց միթէ այդ չէր և՛ ձեր ցանկութիւնը...

ՍՈՖԻԱ

Այո, այդ իմ ցանկութիւնն էլ էր և ձեր միջնորդութիւնը բոլորովին աւելորդ էր։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Սակայն ես իրաւունք ունէի խառնուելու այդ հարցի մէջ։

ՍՈՖԻԱ, հեգնօրէն։

Միթէ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո, օրիորդ, ես ունէի այդ իրաւունքը...

ՍՈՖԻԱ, հեգնօրէն։

Հետաքրքիր է իմանալ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Որովհետև դուք...

ՍՈՖԻԱ, ընդհատելով։

Որովհետև ես Բոզայի բարեկամ լինելով, խղճում էիք ինձ տեսնել Աթոյեանցի ամուսին... Հա, հա, հա...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ոչ, ես ինձ էլի խղճում...

ՍՈՖԻԱ, լրջօրէն։

Ձեզ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո...

ՍՈՖԻԱ

Ես այդ չէի երևակայում...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Այո, ինձ այդ բանը շատ էր տանջում...

ՍՈՖԻԱ

Ի՞նչու համար... Ես Աթոյեանցի հետ ձեր միջնորդութեամբ չեմ ծանօթացել. ընդհակառակն, դուք շատ բան ասած էք ինձ նորա մասին որից յե-

տոյ պէտք է համոզուած լինէիք որ ես չէի ընդունել նորա առաջարկութիւնը։

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Ոչ, ոչ, օրիորդ, այդ չէ իմ ասելիքը...

ՍՈՖԻԱ

Ուրեմն պարզ խօսեցէք։ (Նոյնոմ է՝ Սոֆիան Ռախիլ վերայ, իսկ Ջանումեանցը մօտիկ ալեուռ։)

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ, յուզուած։

Օրիորդ, երեք տարի է համարեա որ մենք ծանօթ ենք. այս ժամանակամիջոցում մենք անդիտակցաբար միմեանց մօտեցանք մեր դաղափարներով և սկզբունքներով։ Ձեր միտն է թէ որքան դժուար էր սկզբում հաշտեցնել մեր կարծիքները, բայց և այնպէս մեզ յաջողեցաւ մեր մէջ ծագած բոլոր տարակուսանքները պարզել... միայն մի բան որ ինձ համար մնաց անբացատրելի, այդ էր...

ՍՈՖԻԱ, հարցրած։

Այդ ինչ էր...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Ուզում եմ ասել, օրիորդ, այդ իմ անկեղծ սիրոյ զգացմունքն էր դէպի ձեզ...

ՍՈՖԻԱ, շփոթուած։

Դէպի ի՞նձ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ, ոգեւորուած։

Այո, օրիորդ, ես ձեզ սիրում եմ...

ՍՈՖԻԱ, վարանման մէջ։

Ի՞նձ... սակայն ես չեմ հասկանում... արդեօք Բօզան...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Դուք շփոթուած էք, օրիորդ, դուք չէիք սպասում լսել իմ խոստովանանքը...

ՍՈՖԻԱ

Այո, ես չէի սպասում...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Այս խոստովանանքը ուզում էի պահել իմ մէջ...

ՍՈՖԻԱ, ինչն իրան։

Մինչև երբ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ, շարունակելով։

Սակայն, այլ ևս անկարող եմ... Ահա, ես ձեր առաջ եմ... ձեր մի խօսքից կախուած է իմ վիճակը...

ՍՈՖԻԱ, աչքերը խոնարհեցնելով։

Մթթէ ես արժանի եմ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ, խաղցրութեամբ։

Օրիորդ, դուք չէ՞ք մերժում ինձ իմ բաղդը...

ՍՈՖԻԱ, ցածր։

Ոչ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ, ոգեւորուած առանց է նորա յետոյը։

Ինձ սիրո՞ւմ էք... Ոհ, օրիորդ, որքան բաղդաւոր եմ... Եթէ ես ձեզ ասեմ որ դուք այս վայրկեանից ինձ շնորհում էք կեանք, այս խօսքն առօրեայ կեանքի մէջ հազար անգամ ասուած ու լսուած բան կը լինի։ Դուք միայն ներկայացրէք ձեզ մի ճանապարհորդ մարդ, որ սար ու ձոր ընկած վերջապէս գտնում է մի հովանոց վայր, ուր վճռում է առ ժամանակ կանգ առնել որ նորից սկսէ իւր թափառական կեանքը, բայց նոր ոյժով և աշխոյժով... Այդ

մարդն ես եմ... Երեսուն տարին՝ իմ թափառական և աննպատակ կեանքի շրջանն էր. այժմ ձեզ հետ աւելի կազդուրուած մտադիր եմ սկսել կեանքիս երկրորդ շրջանը, որ նուիրած կը լինի մեր գաղափարների իրագործելուն: Այդ գաղափարները ձեզ էլ են յայտնի, մնում է որ դուք էլ կամակից լինիք իմ գիտաւորութիւններին...

ՍՈՖԻԱ, գլուխը ընդունելով ջանքերի ոգի վերայ:

Տարէք ինձ էլ այնտեղ, ուր քարշում են ձեզ ձեր ազնիւ ձգտումները...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ, յանկարծ համբուրելով:

Այո, կ'երթանք լի յուսով...

ՍՈՖԻԱ

Սակայն... միթէ ուղիղ է...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Ի՞նչ...

ՍՈՖԻԱ

Այս այնպէս յանկարծ եղաւ որ... ուրեմն կարո՞ղ եմ հաւատալ բաղդիս...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Միթէ կասկածում էք... Ոհ, օրիորդ, ես սիրում եմ ձեզ այն օրից, երբ ձեզ հանդիպեցայ. այն օրից, երբ առաջին անգամ լսեցի ձեզանից հայերէն երկու խօսք...

ՍՈՖԻԱ

Դուք այն ժամանակ շատ խիստ էիք դէպի ինձ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Գիտէի որ աւելի լաւ հետևանքի կը հասնէի...

ՍՈՖԻԱ, սպառնալով:

Ոհ, խորամանկ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Իսկ դուք բաւական էք...

ՍՈՖԻԱ

Բաղդաւոր եմ, որ նպատակիս հասայ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Այսքան ժամանակ սպասելուց յետոյ միայն կարելի է զգալ այս ուրախութիւնը:

ՍՈՖԻԱ

Ձեր մեղն է... ինչու համար էիք սպասել տալիս... այս ուրախութիւնը միշտ կը լինէր, եթէ միայն դուք ուզենայիք... Մի խօսք, մի ակնարկ բաւական էր... իսկ դուք...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Բաւական է, սիրելիս, բաւական է ինձ նախատել...

ՍՈՖԻԱ, գգուելով:

Մի բարկանաք, ես ձեզ չեմ ուզում նախատել...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Այդպէս, իմ նազելի:

ՍՈՖԻԱ, ծպտալով:

Բայց ես ձեզ նախատելու աւելի ունիմ...

ՉԱՆՈՒՄԵԱՆՑ

Կանխապէս ներողութիւն եմ խնդրում...

ՍՈՖԻԱ

Դուք ինչպէս համարձակուեցաք կասկածել որ ես Աթոյեանցի ամուսինը կարող եմ լինել:

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ճշմարիտ է, իրաւունք ունիք ինձ դատապարտել. բայց ձեր հայրն այդ շատ էր ուզում...

ՍՈՖԻԱ

Ես հօրս առաջարկութիւնը չընդունեցի...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Հօրդ հետ խօսե՞լ էք...

ՍՈՖԻԱ

Այո՛...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Յետո՞յ...

ՍՈՖԻԱ

Ոչինչ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, վեր կենալով։

Ուրեմն, հօրդ պէտք է տեսնել...

ՍՈՖԻԱ

Ի՞նչու համար...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Խնդրելու նորա համաձայնութիւնը...

ՍՈՖԻԱ

Այժմ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Հէնց այս րոպէին...

ՍՈՖԻԱ, վեր կենալով։

Նա այժմ տանը չէ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Կ՚երթամ աշխարհի այն ծայրն էլ նորան գտնելու։

ՍՈՖԻԱ

Դուք այժմ մի՛ գնաք... յետոյ միասին խնդրենք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, յետոյը համբուրելով։

Այո՛, խնդրենք միասին... ես այլ ևս չեմ տարակուսում... (Գնո՞ւմ է դէպի մեջը դուռերը, դրսէն դռան հա՞մ է օր. Բերոյեանցին։) Ա՜խ, օրիորդ, որքան ուրախ եմ ձեզ տեսնել։ (Միասին դուրս են գալիս։)

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՆՈՒՔԱ, ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՍՈՖԻԱ, վազելով օր. Բերոյեանցի մօտ։

Բօզա, Բօզա, սիրելիս... (Գրկո՞ւմ է նորան։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Փառք Աստուծոյ, Սոֆիա, որ քեզ ուրախ եմ տեսնում...

ՍՈՖԻԱ

Այո՛, ուրախ եմ, այժմ ուրախ եմ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, օր. Բերոյեանցին յետոյը մեկնելով։

Օրիորդ, ես պէտք է ձեզ իմ խորին շնորհակալութիւնը յայտնեմ...

ՍՈՖԻԱ

Իսկ ես ներողութիւն պէտք է խնդրեմ քեզանից։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, զարմացած նայում է երկուսին։

Ի՞նչու համար... չեմ հասկանում։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Սոֆիան թոյլ ձեզ բացատրէ. իսկ ես կ՚երթամ պտուելու սորա հօրը։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սոֆիայի հայրը տանն է, պարոն Ջանումեանց։

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Աբելի լաւ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Մարդ կայ նորա մօտ... Հիւրասենեակումն են...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ես այժմ ոչ ոքից չեմ վախենում... Սոֆիա, դուք մնացէք օրիորդի հետ, իսկ ես կ'երթամ։ (դուրս է գնում։)

ՍՈՖԻԱ, Ջանումեանցի յետևից։

Ստեփաննոս... Ա՜խ... վախենում եմ որ Հայրս նորան վիրաւորէ...

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ջանումեանցը քեզ բա՞ն ասաց...

ՍՈՖԻԱ

Դու չը գիտես, Բօզա... նա ինձ սիրելիս է եղել... Ա՜խ, Բօզա, Բօզա, որքան ես բաղդաւոր եմ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո՛, նա քեզ սիրում է...

ՍՈՖԻԱ

Դու այդ գիտեցել ես և ինձ չես ասում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այս քանի օրերս ես զուշակում էի...

ՍՈՖԻԱ

Ա՜խ, Բօզա, եթէ ես գիտենայի կամ քեզ պէս

զուշակէի, այն ժամանակ հօրս առաջարկութիւնը հաստատ կը մերժէի... բայց ես անյայտութեան մէջ էի. զանազան կասկածներ ինձ խեղդում էին։ (Դուռը թակում է Ռոխոյի ձէրոյ։)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այժմ փարատեցիր կասկածներդ։

ՍՈՖԻԱ

Այո՛... Ա՜խ, ինչեր չէի մտածում... գիտես, երեք տարի է որ սիրելիս է եղել ինձ... զարմանալի մարդ է... Ի՞նչու համար այսքան ժամանակ ինձ չը յայտնեց իւր սէրը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Դու ինքդ կը յայտնէիր...

ՍՈՖԻԱ

Ե՞ս... Մի՞թէ ես կարող էի...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Եթէ քո տեղը լինէի, կարող էի...

ՍՈՖԻԱ

Դու իմ տեղը լինէիր... Բօզա, ասա խնդրեմ, դու ուրեմն նորան չէիր սիրում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, շփոթուած։

Ե՞ս... ոչ...

ՍՈՖԻԱ

Ա՜խ, Բօզա, սիրելիս... Ե՛կ, նստիր մօտս։ (օր. Բերոյեանցը նստում է։) Բօզա, ես քո առաջ մեղաւոր եմ։ Ես կարծում էի որ դուք միմեանց սիրում էք, մինչև անգամ նախանձում էի քո սիրոյն։ Եթէ ուզում ես իմանալ թէ ինչու համար մի մի անգամ մաղձոտ էի երևում քեզ, ինչու համար թթուած ու նեղա-

ցած էիր ինձ տեսնում, այդ սիրոյ նախանձն էր որ կրծում էր իմ սիրտը ու չարաչար տանջում հոգիս... բայց այժմ ուրախ եմ, այնքան ուրախ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ներիր ինձ, Սոֆիա, բայց ես կ'ասեմ քեզ որ փոքրոգի ես եղել...

ՍՈՖԻԱ

Խոստովանում եմ... բայց մի՞թէ դու իմ տեղս լինէիր, միևնոյնը չէիր անիլ, մի՞թէ դու չէիր նախանձիլ, եթէ դու սիրելիս լինէիր նորան և ես յափշտակէի քեզանից նորա սէրը...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ե՞ս... չեմ կարծում։

ՍՈՖԻԱ

Ի՞նչ ես ասում, Բ՞օզա... գիտես որ սիրոյ նախանձը մարդուս մինչև ինքնասպանութիւն է հասցնում...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Նայելով թէ Ջանումեանցը ո՞ր աղջկան կը սիրէր. բայց եթէ իմանայի որ նա քեզ է սիրում, ես մինչև անգամ կ'օգնէի ձեզ հասնելու ձեր նպատակին...

ՍՈՖԻԱ

Ո՜հ, դու շատ բարի ես եղել...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Այո՛, Սոֆիա, ես 'այդ կ'անէի, թէպէտ գիտեմ որ սիրտս սաստիկ կը տանջուէր...

ՍՈՖԻԱ

Կասկածում եմ... Եթէ իմանայիր թէ ինչ է սէրը, անպատճառ կը զգայիր քո մէջ և՛ նախանձ։

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ոչ, Սոֆիա, ես իմանում եմ, և այնպէս եմ հասկանում սէրը, որ հարկաւոր ժամանակ պարտաւոր եմ նորան զոհել...

ՍՈՖԻԱ

Սէրը զոհել... ուրեմն դու չես իմացել թէ ինչ է սէրը...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ոչ, Սոֆիա, գիտեմ և հասկանում եմ որ սէրը անբաժանելի ընկեր է որ առաջնորդում է մարդուս դէպի բարին. որ նա ծագում է մարդուս մէջ երախտագիտութեան զգացմունքի հետ...

ՍՈՖԻԱ

Ոչ, սիրելիս, սէրը ծագում է սկզբում գաղափարների տարբերութիւնից։ Այդ բանը ես ինձ վերայ փորձեցի... Պատահում էր որ պատրաստ էի լինում ատել նորան, աշխատում էի շարաթներով չը տեսնել նորան. նորա ձայնը ախորժելի չէր ինձ. նորա խօսքերը կտրատում էին իմ սիրտը...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ, յափշտակուած։

Հետաքրքիր է...

ՍՈՖԻԱ, շարունակելով։

Բայց մէկ էլ տեսնես, սկսում էի նեղանալ ու տանջուիլ. մի տեսակ զգացմունք քարշում էր ինձ դէպի նա. ես կարօտում էի նորան... կրկին ու կրկին միևնոյնն էր պատահում, երբ նա սկսում էր հերքել գաղափարներս, ծաղրել նախապաշարմունքներս... (լռելով։) Բ՞օզա, սիրելիս, այժմ յուսով եմ

որ այլ ևս չես գնալ գիւղ. կը սպասես մեր հարսանիքին...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, յոգ-ոյ հանելով։

Ոչ, սիրելիս, ես չեմ կարող մնալ...

ՍՈՖԻԱ

Բօզա, մի՞թէ կարելի է... Սպասի՛ր ես Ստեփանոսին կ'ասեմ. նա քեզ կը ստիպէ մնալ... բայց ո՞ւր է նա... ի՞նչու ուշացաւ... Բօզա, գնանք տեսնենք, կարելի է գնացել է. կարելի է հայրս նորան վիրաւորեց։ (Վեր է կենում։) Մի՞թէ առանց ինձ տեսնելու կ'երթայ... Չա՞, Բօզա, ի՞նչ կասես...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, վեր կենալով։

Ձէր գնալ...

ՍՈՖԻԱ

Կ'երթամ, Բօզա, սիրտս անհանգիստ է։ Գնամ իմանամ այստեղ է թէ գնացել է։ (Զոռալով դուրս է գնում ձեռնից։)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ, մենակ։

(Սոֆիայի գնալուց յետոյ հանգիստ է չնմանալով ինչ անել։) Ես ի՞նչ անեմ... Ամէն բան արդէն հաստատ է և պարզ... Այժմ բոլորը գիտեմ... Շնորհակալ եմ, Ջանումեանց, դուք հաւանեցիք Սոֆիային... բայց ես ի՞նչով եմ նորանից պակաս... ես նորանից աւելի աշխատող եմ, աւելի հասկացող եմ և աւելի ոյժ եմ զգում իմ մէջ... բայց դուք էլի նորան հաւանեցիք...

Այո՛, փող է ինձ պակաս... բայց մի՞թէ հարստութեան հետ պէտք է կապէիք և այն բոլորը, ինչ որ դլխաւորը էք համարում մի աշխատասէր օրիորդի համար... Սոֆիան այդ բոլորը ստացաւ... իսկ ե՞ս... Հա՛, հա՛, հա՛... յուսա՜հատութիւն... արժէ մի՞թէ յուսահատուիլ այժմ, երբ մարդս պէտք է գործէ... Եւ ես ի՞նչեր էի երեւակայում... կեանք՝ սիրած մարդու հետ, գործ և մեծ գործ՝ աշխատող մարդու հետ... անձնուիրութիւն՝ ինձ այդ սովորեցնողի հետ... Մի՞թէ վիճակուել է ինձ այդ բոլորը միայնակ կատարել... Այո՛, միայնակ... այնտեղ, ուր ինձ անհամբեր սպասում են... Երթամ ճանապարհիս պատրաստութիւնը տեսնեմ։ (Գնում է շտապով, մէջին դռնէրը՝ պոռոհում է Սոֆիային։) Չա՛, ի՞նչ է, Սոֆիա, ի՞նչ ես սիրթնել...

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍՈՖԻԱ, ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՍՈՖԻԱ

Ա՛խ, Բօզա, վախենում եմ... Հայրս շատ անհանգիստ խօսում է Ջանումեանցի հետ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Յետո՞յ...

ՍՈՖԻԱ

Ա՜խ... Երևի չի համաձայնում մեր ամուսնութեան...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Էլի՛ յուսահատութիւն... զարմանալի արարածներ

էք դուք տանու աղջիկներդ... կամենում ես որ բոլորը քո սրտի ուզածով լինի, բոլորը կատարուի քո ցանկութեամբ... այդ անկարելի է, Սոֆիա... քո հայրը մարդ է, ունի իւր համոզմունքները... կ'ուզես այդ համոզմունքները սրտիդ ուզածին պէս մի բոպէում փոխել...

ՍՈՖԻԱ

Ախ, սիրելիս, նազելի իմ Բօզա, օգնիր ինձ. խօսիր հօրս հետ... Ահա, նա գալիս է այստեղ... սիրելի, հոգիս...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Սպասիր... գնանք իմանանք Ջանումեանից թէ ինչ պատասխան է նորան տուել, յետոյ...

ՍՈՖԻԱ

Գնանք, գնանք... բայց պէտք է ինձ օգնես, Բօզա... (Զոռոզով դուրս են գնում մեջն դռնէից:)

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, մենակ:

(Մտնում է աջ դռնից այլայլուած:) Այս ինչ նոր բան է... Ո՞րտեղ է Սոֆիան... թէ խնդրեց մտածել... խարում է ինձ... բայց նա այնպէս հաստատ էր խօսում, կարծես թէ նրանց մէջ այդ հարցը արդէն վճռուած է... Գուցէ Սոֆիան Բօզայի համար էր միջնորդում, իսկ նա ուրիշ կերպ հասկացաւ... Ոչ, հարկաւոր է հարցը պարզել... (դանդ է գալիս, ծառան մտնում է:) Խնդրիր այստեղ օրիորդ Սոֆիային: (Ծառան դուրս է գնում:) Այս ինչ պատիժ է... եթէ ուզիղ լինի և Սոֆիան չը համաձայնի ամուսնանալ Աթոյեանցի հետ, գլուխս ամբողջ աշխարհում դուրս կտրելու կը դառնայ... ես նրանց խօսք եմ տուել, նրանք էլ այդ յոյսով են... Ցեռտ կանգնեմ... ինչ ասեմ... աղջիկս չէ ուզում նրան, ուզում է Ջանումեանցի հետ ամուսնանալ... Ոչ, ոչ, անհնարին բան է... Տանու բժիշկ... Վա՛յ այն օջախին ուր որ տղամարդու վզին է գնվում ամէն հոգսերը... ինչ էի արել...

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՍՈՖԻԱ:

ՍՈՖԻԱ մտնելով աջ դռնից:

Պապա, դու էիր ինձ կանչել...

ԳՈՒԼԵԱՆՑ, փաղցրութեամբ:

Այո, որդի... Բօզան՝ ուզիղ է որ ուզում է յետ դառնալ գիւղ... դու նրան թողնում ես...

ՍՈՖԻԱ

Ճատ էլ չեմ ուզում թողնել, բայց ինչ անես չէ մնում:

ԳՈՒԼԵԱՆՑ

Ոչ, մի թողնիր... եգուց, էլ օր հարսանիքդ կը լինի... գիտես որ առանց նրան լաղաթ չի ունենալ... Բարսեղն էլ շատ է ուզում որ նա այստեղ լինի:

ՍՈՖԻԱ

Աթոյեանցը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո, Աթոյեանցը... (Խոսը դեռեկով:) Ես այսօր պէտք է նրանց մօտ գնամ և ասեմ որ Հարսանիքի համար պատրաստութիւն տեսնեն:

ՍՈՖԻԱ

Ոչ, դու այդ չը պէտք է անես...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի՞նչու համար... միթէ դու փոխել ես դիտաւորութիւնդ ամուսնանալ Աթոյեանցի հետ...

ՍՈՖԻԱ

Ես այդ դիտաւորութիւնը քեզ երբէք յայտնած չեմ:

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո, գիտեմ... դու դեռ էլի պէտք է մտածես... Լաւ, սիրելիս, կայ էլի ժամանակ... մտածիր. . թող էլի սպասեն:

ՍՈՖԻԱ

Ոչ... նրանք սպասելու ոչինչ չունին... Պապա, ես Աթոյեանցին չեմ ուզում...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ի՞նչպէս...

ՍՈՖԻԱ

Այո... Եթէ ցանկանում ես իմ բաղդաւորութիւնը, դու ինձ չը պէտք է ստիպես ամուսնանալ նրա հետ:

ԳՈՒԼԵԱՆՑ

Զատ ցաւում եմ, որ չես հաւանում այդպիսի մի լաւ երիտասարդի... Ուրեմն մինչև երբ դու պէտք է տանը նստես: Ես ընդհակառակն, կարծում եմ որ

շատ լաւ կանես, եթէ նրա առաջարկութիւնը ընդունես:

ՍՈՖԻԱ

Եթէ ուզում ես որ ես անպատճառ մարդու գնամ, կ'ուզէի քեզանից խորհուրդ հարցնել և խնդրել օրհնել ինձ Ջանումեանցի հետ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Չա՜... ուրեմն ուզի՞ղ է... Զատ և շատ շնորհակալ եմ, Սոֆիա, մեծ ուրախութիւն ես պատրաստել ինձ համար...

ՍՈՖԻԱ

Միթէ դու չես հաւանում Ջանումեանցին... Քանի անգամ ասել ես ինձ թէ նա ազնիւ և լաւ երիտասարդ է... Այժմ, միթէ՞ նա քո կարծիքով փոխուել է:

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո, ասել եմ, բայց ոչ թէ նրա համար որ նա քո ամուսինը լինի... Միթէ ամէն մի երիտասարդ, որին ես գովեմ, կարող է քո ամուսինը լինել... Ջանումեանցն իրա գեօրա վատ երիտասարդ չէ, աշխատող մարդ է, բայց Աթոյեանցն ուրիշ է... սա հարուստ է, բարեկամութիւն ունի, լաւ գործքի մէջ է, վերջապէս մեզ լաւ յայտնի օջախի որդի է... Իսկ Ջանումեանցն որը տղայ է, իրա քրտինքով ապրող մարդ է... Ոչ, ոչ, Սոֆիա, հօրդ մի՛ վշտացնիր... այդ բանը գլխիցդ հանի՛ր... Դու լաւ գիտես թէ Ջանումեանցին ում հետ ամուսնացած կուզէի տեսնել...

ՍՈՖԻԱ (դողդողելով:)

Հայր, քսան տարեկան հասակի եմ հասել և մին-

չև օրս քեզ երբէք չեմ վշտացրել. այժմ ևս միտք չունիմ քեզ նեղութիւն պատճառել։

ԳՈՒԼԵԱՆՑ

Ուրեմն համաձայն ես իմ առաջարկութեանը... շատ ուրախ եմ...

ՍՈՖԻԱ

Այդպէս շուտ մի՛ ուրախանար... Այս անգամ կ'ուզեմ քո ցանկութեան հակառակ գործ բռնել և ամուսնանալ Ջանումեանցի հետ...

ԳՈՒԼԵԱՆՑ, դեղջուկ։

Ինձ հակառակ գո՞րծ... Զատ լաւ... Եթէ չանես և ես իմ ուզածը կատարեմ...

ՍՈՖԻԱ

Այդ կը լինի իմ առաջին և վերջին ցանկութիւնը, այնուհետև ինչ ուզենաս, այն արա՛ ինձ հետ...

ԳՈՒԼԵԱՆՑ, հանգիստ։

Սոֆիա՛, դու չես հասկանում արածդ... եթէ մի փոքր մտածես, ինքդ կը տեսնես որ դու խաբվում ես... Մտածի՛ր, խորհի՛ր, սիրելիս...

ՍՈՖԻԱ

Ես մտածել եմ ու խորհել...

ԳՈՒԼԵԱՆՑ, խիստ։

Սոֆիա՛...

ՍՈՖԻԱ

Ոչ, ո՛չ, մի՛ լինիր խստասիրտ... (լայ է լինում։) մի՛ կոտրիր սիրտս... ինչ որ ես այսքան ժամանակ սրբութեամբ պահել եմ սրտիս մէջ, ինչ որ փայփայել եմ, այն քո խստասրտութեամբ մի՛ ոչնչացնիր... Աղաչում եմ, հայր, աղաչում եմ...

ԳՈՒԼԵԱՆՑ, մի կողմ։

Այս ինչ կրակ է, Տէր իմ Աստուած... (Քարչը ոտքերը-ընկնում։) Սոֆիա՛, ես խստասիրտ չեմ... ես միայն չեմ ուզում քեզ տեսնել Ջանումեանցի ամուսին, որովհետև ես չեմ կարող հաւատացած լինել, որ դու նրա հետ երջանիկ կը լինես... Իսկ ես իմ ամբողջ կեանքը քո երջանկութեան համար եմ մաշել, քո բաղդաւոր ապագայի համար աշխատել, քեզ միշտ գոհ ցանկացել եմ տեսնել... Այս նպատակին ես ինձ հասած եմ տեսնում այժմ և դու չես ուզում հասկանալ... Ուրեմն հօրդ լսի՛ր և ինձ մի՛ վշտացնի՛ր... երդուեցնում եմ քեզ քո խեղճ մօր գերեզմանի վերայ...

ՍՈՖԻԱ, շտապով։

Ոչ, ո՛չ, հայր մի՛ ասիր այդ խօսքը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ուրեմն, մեր մէջ խօսելու էլ ոչինչ չէ մնում... Այսօր կ'երթամ նրանց մօտ և կը յայտնեմ վճիռս...

ՍՈՖԻԱ

Ոչ, հայր, դու այդ չես անիլ... Ես լաւ եմ ճանաչում քեզ, գիտեմ քո բարի սիրտը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Սոֆիա՛, վերջին խօսքս է՝ կամ ամուսնանալ Աթոյեանցի հետ, կամ...

ՍՈՖԻԱ, ընդմիջելով։

Կա՞մ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այդ ես գիտեմ... Ուրեմն, այո՛ թէ ոչ... (Սոֆիան

լռում է։) Պատասխանիր Սոֆիա, կ'ուզես ամուսնանալ Աթոյեանցի հետ, թէ ոչ...

ՍՈՖԻԱ, ինչո՞ւ հէր պատերազմելս։ յետոյ, ասծը յայտնվի։

Ոչ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Լաւ... գնա սենեակդ... գնա և աչքիս մի երեւար...

ՍՈՖԻԱ, հնազանդելով գնում է և մտնելով ետ դառնում, յետ է նայում։

Հայրը...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ո՛չ մի խօսք...

ՍՈՖԻԱ, դառն մտ։

Հայրը... մի պախարակիր իմ արարմունքը... երդվում եմ քեզ որ չեմ կարող լինել Աթոյեանցի ամուսին...

ԳՈՒԼԵԱՆՑ

Չեմ ուզում քեզ լսել։ (ուզում է գնալ դէպի ներքին դռները, Սոֆիան այս պնդելով, հեկեկալով դուրս է գնում։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, յետոյ ԾԱՌԱՅ։

ԳՈՒԼԵԱՆՑ, գլուխը երկու յետոյով բռնած յետ է գալիս և նստում է սեղանի առաջ։

Ոհ, ո՛հ, այս ինչ պատիժ է... Միթէ այս պէտք է լիներ իմ այսքան տարուայ չարչարանքի վարձատրութիւնը... Մօր մահից յետոյ երես տուի, ամէն

ուզածը կատարեցի որպէս զի որբի դառն վիճակը չը քաշէ... Ջանումեանց... Ա՜խ... Ջանումեանց... դու օգուտ քաղեցիր հանգամանքից իմ աղջկան կրթելով, բայց մոռացար իմ աղ ու հացը... ինչ պէտք է լինի սրա վերջը... այս խայտառակութեանը կայ արդեօք մի ելք... Մի կողմից էլ նրանք են շտապեցնում... ախր նրանք էլ իրանցը չեն կորցնիլ... (Վէր է ելնում անհանգիստ։ Դառն մտնում է։) Այդ էլ ինչ է...

ԾԱՌԱՅ, ծրարը տալով։

Նամակ պարոն Աթոյեանից...

ԳՈՒԼԵԱՆՑ, ծրարն առնելով։

Հը՜մ... նամակ... գնա լաւ... (ծրարը բաց է անում։) Կ'ասես նամակ բերողին որ ինքս կը տեսնեմ պարոնին։ (Դառն դուրս է գնում։) Տեսնենք հիմի ինչ է գրում։ (Կարդում է լռելեայն։) Ա՜խ... պառաւ աղուէս, գիտէի որ քեզ հետ բարեկամութիւնն ուժան չի նստիլ ինձ... հա՛, հա՛, հա՛... (Նամակը կարդում է։) «Եթէ յիսուն հազարն իսկոյն չէք տալ, Բարսեղս կ'երթայ ուրիշի հետ ամուսնանալու»... Տես, տես, ինչպէս է ինձ վախեցնում... Բարսեղը փողի համար է ուզում աղջկանս... Չէ, պէտք է գնալ այն աղուէսից բացատրութիւն պահանջել... Հը՜մ, փողն իսկոյն, բանկի տոմսակ... Ոհ, ո՛հ, թէ սկզբից նրանք գործը այսպէս են բռնում, վերջը հոգիս կը հանեն... Ախր հին աստիճանաւոր է... կը գիտենայ ծակ ու ծուկ տեղեր, հալբաթ որդուն էլ կը սովրացնէ... (Զարմանալ դուրս է գնում ներքին դռնից։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԵՒ ՄԻԵՐՐՈՐԴ

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ԾԱՌԱՑ։

ԾԱՌԱՑ, ՄՋ ԴՈՒՐԸ ԲԱՑ ՄՆԵԼՈՎ։

Համեցէք, պարոնը այստեղ է...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ո՞ւրտեղ է...

ԾԱՌԱՑ

Այս բոպէիս այստեղ էր. իսկոյն կ՚իմանամ։ (ԴՈՒՐԸ Է ԳՆՈՒՄ։)

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, Մեկն։

Մինչև նորա գալը... աներոջս սիգարներից կը ծխեմ... (ՎԷՐՑՆՈՒՄ Է ՍԻԳԱՐԸ ԿԱՐԱՆԻՑ ԵՎ ԾԽԵԼՈՎ ԼԵԿԷ Է ԸՆԴՆՈՒՄ ԲԱԶԿՈՒՆԻՆ ՄԵՋ։) Է՜հ... այժմ ես իմ տանն եմ... Այս օրուայ ուլտիմատումը բաւական լաւ փորձաքար էր որ աներոջս քսակը բացուի և լիսուն հազարը գլորուի... Է՜հ... կասկած չը կայ որ այդպէս էլ կը լինի և իմ աներս՝ բազաղխանում եւրոպական քաղաքավարութիւն սովորած, սիրալիր խօսքերով ինձ կը պատասխանէ... «Իմ աղջիկս իրան համար պատիւ է համարում ձեր ամուսինը լինել և ահա այս գլխից լիսուն հազարը...» Նորա աղջի՞կը... Սոֆի՞ան... Ա՜խ... եթէ միայն սորա փողը նա ունենար. նորա գեղեցկութիւնը սա, այն ժամանակ ուրիշ բան կը լինէր... Ա՜խ... Բօզա, Բօզա, ի՜նչ քնքոյշ անուն էլ ունի... Իրաւ գեղեցիկ է... Այս տեսակ գեղեցկութիւնն այժմ միայն գիւղերում կարելի է գտնել... Այսքան ժամանակ Թիֆլիսումն եմ, չեմ ասում գե-

ղեցիկ, այլ մի դուրական պատկեր անգամ չը տեսայ այս անիծեալ քաղաքում... Սակայն օրիորդ Բերոյեանցը երջանկութիւն է... ինչպէս ասած է՝ գետը ծարաւ կը տանէ՝ ծարաւ յետ կը բերէ... Այս բանը շատ դուրական է աղջկայ մէջ. նորա գեղեցկութիւնը մէկն երկուսով է աւելանում... Անպատճառ պէտք է նորան ձեռք բերել... (ՈՒԳԼԱՍԱԾ ՎԷՐ Է ՀԷՆՈՒՄ։) Ճտապելու բան է, թէ մի քիչ էլ ամուսնութիւնս ուշանայ, փոյթ չէ. միայն թէ նորան ձեռք բերեմ... Ի՜նչ փոյթ, կը փորձեմ... Ո՞ր աղջիկը չի փոխիլ գիւղի անհամոյ և ձանձրալի կեանքը քաղաքային ճոխ ու շռայլ կեանքի հետ... դա ի՜նչ հազուադիւտ պտուղ է... բոլորը շինծու է՝ ի՜նչ ազգ, ի՜նչ բան... Է՜հ, ոչ ոք չէ երևում, մինչև աներոջս գալը, դնամ հիւրասենեակ; դուցէ իմ ոտի ձայնը վերայ մէկն ու մէկը դուրս գայ... (ԳՆՈՒՄ Է ԴԷՊԻ ՄՋ ԴՈՒՆԸ, ՎՐԵՆ ՊՈՊՈՀՈՒՄ Է ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑԻՆ։) Ա՜խ, օրիորդ, որքան ուրախ եմ... (Մեկ հոգի։) Նախահնամութիւնն անգամ ինձ օգնում է...

ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ԴՈՒՆԸՐՈՒՄ ՇՓՈԹՈՒԾ։

Ա՜խ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ՃԱՆԱՊԱՐՀ ՊՈՂՈՎ։

Համեցէք, համեցէք, օրիորդ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ՝ՔԼՈՆՈՆԼԵՎ։

Ես... պարոն Գուլեանցին եմ... ուզում...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ես էլ նորան եմ սպասում, այս րոպէիս կը գայ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Ղ ԽՈՂՄ։

Այս ո՞ւմ պատահեցայ... չարէս ինչ, պէտք է մնալ...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ա՜խ, օրիորդ, միթէ ես ձեզ հետ ժամանակ չեմ կարող անց կացնել...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ՝ՈՒՐԱԽ ԳՈՒՐԵՎ։

Սպասենք ուրեմն միասին պարոն Գուլեանցին։

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ի հարկէ միասին, այո՛ միասին որովհետև այս անիծեալ քաղաքում, ուր հազուագիւտ են գեղեցիկ օրիորդները, ինձ համար մեծ բաղդ է մի քանի րոպէ ձեզ հետ մնալ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ԾԱՆՐԱԲԱՐ Ա ԽԻՍՈՒ։

Պարոն Ա՛թոյեանց... դուք ձեր զուարճախօսութիւնները չէք թողնում... (ԾՈՒՌԱՀ Է։)

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ, ԾՈՒՌԵԼՈՎ ՄՕՏԻՆ ՈՒՐԱԽ ՎԵՐԱՅ։

Ի՞նչ անեմ... ձեզ տեսնելով ես ակամայ դառնում եմ և՛ զուարճախօս և՛ ճարտար... Ի՞նչ կը լինէր որ դուք միշտ ինձ մօտ լինէիք և ներշնչէիք ինձ այդ երկնային շնորհքը։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Մի մեծ գլուտ չէր լինի ձեզ համար՝ դուք խօսում էք իբրև մի սիրահարուած պատանի...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ուրեմն դուք հասկանում էք իմ լեզուն... Շատ

բաղդաւոր եմ որ վերջապէս կարողացայ հասկացնել ձեզ այն, ինչ որ սրտիս մէջն է... Օրիորդ, դուք պէտք է այստեղ մնաք, քաղաքում, այստեղ, ինձ մօտ, որ կարողանամ հիանալ ձեր գեղեցկութեան վերայ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ԾԻԾԱՂԵԼՈՎ։

Իսկ Սոֆիան ո՞ւմ մօտ գնայ... դուք, կարծեմ, ուզում էք ամուսնանալ նորա հետ...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ

Ձեզ տեսնողը միթէ կարող է Սոֆիային հաւանել... Ոչ, Սոֆիան չէ իմ իդէալը... դա այն օրիորդներից է, որոնք ամբողջ կեանքը կեղծաւորութեամբ պէտք է ձգտին դէպի մի աներևոյթ երկիր, որ աշխարհագրական անուն անգամ չունի...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Ղ ԽՈՂՄ։

Օ՜ճ...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ, ՇՐՈՒՆՈՒՉԵԼՈՎ։

Դոքա այն ողորմելի անձինքն են, որոնք պէտք է աշխատեն իւրեանց նմաններին բաղմացնել, որ յետոյ նոցա նստացնեն իւրեանց շուրջը և զբաղին ֆրէօբելեան խաղերով, կամ թէ չէ սկսեն պա... պա... մա... մա... վանկեր նոցա կապել տալ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, Ղ ԽՈՂՄ։

Սա մարդ չէ...

ԲԱՐՍԵՂ. ԱԹՈՅԵԱՆՑ, ՇՐՈՒՆՈՒՉԵԼՈՎ։

Ոչ, Սոֆիան չէ իմ իդէալը... դուք էք, օրիորդ, դուք. ձեզ հետ աշխարհը նեղ չի լինիլ... ձեզ նման օրիորդի հետ կեանքը մինչև անգամ նախանձելի է... թանկագին հաղուստ հագած, ոսկի ու աղա-

մանդով զարդարուած տեսնել ձեզ հեռուից նստած ճոխ ու հարուստ կառքի մէջ և լսել ամէն կողմից ընկերներից նախանձից շարժուած բացագանչութիւններ՝ օհ, օհ, Աթոյեանց, ի՜նչ չքնաղ գեղեցկուհի ես ճարել... Ահա՛, այս է իմ ցանկութիւնը... (վէր է կենում:)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, երկար ժամանակ ծիծաղը պահելու յետոյ, յանկարծ փրկում է:

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ:

Սոսցի հաղուստդիւտ պտուղ չէ... (Բարձր:) Օրիորդ, ինչ էք ծիծաղում. հաւանում էք այս տեսակ կեանքը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ո՜հ, ի հարկէ...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ուգեւորուած մեկնում է յետոյը:

Ուրեմն, տուէք ինձ ձեր ձեռքը...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, յետ քաշելով, ծանր:

Ի՞նչու համար...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, մի կողմ:

Հասկանում է, բայց ուզում է քաշքշել: (Բարձր) Իրը թէ դուք չէք հասկանում... տուէք ձեր ձեռքը... դուք պէտք է մնաք Թիֆլիսում և ապրէք ինձ հետ... ես հարուստ եմ, շատ հարուստ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, այլայլուած վէր է կենում:

Լռեցէք, պարոն Աթոյեանց...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ

Ի՞նչու էք նեղանում... դուք... երևի ինձ չը հասկացաք... Եթէ կամենում էք ես մինչև անգամ կը թողնեմ Սոֆիային և կ'ամուսնանամ ձեզ հետ...

(Վերջին խօսքերի ժամանակ Գուլէանցը մտնում է մեջտեղից և շուրջը նայում է:)

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Լռեցէք, ասում եմ ձեզ, ամօթ... ես ձեր սիրածն... (շրջուած ընկնում է պոչիս մօտակայ աթոռի վերայ:)

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, մօտենալով ուզում է նորա յետոյը տանել:

Օրիորդ, լսեցէք ինձ:

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, հեռացնելով իւր յետոյը:

Հեռացէք թշուառական...

ԲԱՐՍԵՂ ԱԹՈՅԵԱՆՑ, ինքն իրան:

Առաջին անյաջողութիւնը կեանքիս մէջ... (յետոյը ետ է պոչիս և դուրս է գնում ոչ դոնից:)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԵՒ ԵՐԵՔԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ:

ԳՈՒԼԵԱՆՑ, յետոյերը խաչուած կամաց կամաց պտտվում է գալիս և կանգնում է օրիորդ Բերոյեանցի դուռը:

Ներեցէք, աղնիւ օրիորդ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ուռփուռելով:

Պարոն Գրիգոր... (լաց է լինում:)

ԳՈՒԼԵԱՆՑ, ինքն իրան:

Հիմի հասկացայ թէ ում հետ էի ուզում գործ բռնել... գրանց են գովում Թիֆլիսում... գրանց ձեռքն են սեղմում սիրով. գրանք են միթէ մեր հիմիկուայ երիտասարդները... Ո՞րտեղ է Սոֆիան... Ես նրան վիրաւորեցի այս անզգամի համար... Երևի

այժմ նստած լաց է լինում... Ոչ, ոչ, Սոֆիա, մի՛ լար, խնդա՛, խնդա՛, ես քեզ անզգամների համար չեմ մեծացրել... (յանկարծ դռան է գնում մեջն դռնէրեկ։)

ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԵՒ ՀՈՐՐՈՐԴ

ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ, յետոյ ՍՈՖԻԱ։

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, ուշէն գալով։

Ուրեմն այս է եղել մեր ճակատագիրը... Մենք որը ու աղքատ աղջկերքս պէտք է Ամոյեանցի սիրականը լինինք... Մի ամիս առաջ գիշեր ցերեկ անհամբեր սպասում էի այստեղ գալուն, գլխապատառ եկայ, որ այսպէս անարգուիմ... միթէ մարդոց մէջ խղճմտանք չէ մնացել... Ա՜խ, Սոֆիա, տուր ինձ իմ ուրախութիւնը։ (վեր է ելնում, դեղէց և նորից նստում լոյ լինելով։)

ՍՈՖԻԱ, ուրախ դէմքով վազելով ալ դռնէն։

Բօզա, սիրելիս, որքան ես բաղդաւոր եմ... շնորհաւորիր ինձ... հայրս համաձայն է ամուսնացնել ինձ Ջանումեանցի հետ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, շփոթուած։

Հա՜... շնորհաւորում եմ... (մի դողմ։) Ա՜խ, վերջացաւ։ (վեր է կենում։)

ՍՈՖԻԱ

Բօզա, սիրելիս, միթէ դու ինձ այդպէս պէտք է շնորհաւորես...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ, աշխատելով ինքդ էրեսը։

Շնորհաւորում եմ, Սոֆիա...

ՍՈՖԻԱ

Բօզա, այս ի՞նչ տեսակ եմ քեզ տեսնում, հոգիս, քեզ չէ՞ սազ գալիս... Լսիր, այլ ևս ինձ Ամոյեանցի հետ չեն ամուսնացնում, Ջանումեանցի հետ, գիտես, Ջանումեանցի հետ...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այո՛, գիտեմ, Ջանումեանցի հետ... Շնորհաւորում եմ, Սոֆիա, բաղդաւոր էիր, բաղդաւոր լինիս...

ՍՈՖԻԱ

Կարծես թէ դու ուրախ չես...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Ո՜հ, ոչ, ուրախ եմ, Սոֆիա, ինչպէս չուրախանամ որ դու հասար նպատակիդ, ուրախ եմ...

ՍՈՖԻԱ

Այո՛, գիտեմ որ դու իբրև իմ բարեկամ ինձ հետ ուրախ կը լինես... Տես թէ ինչպէս պատահեցաւ... Չեմ իմանում թէ այստեղ ինչ էր անցել, հայրս յանկարծ մտաւ իմ սենեակը և ինձ համբուրելով ասաց՝ բաղդաւոր լինիս, որդի, դու այսուհետև Ջանումեանցին ես պատկանում... Ես շուարած մնացի... Մեր խօսակցութիւնից յետոյ ինչ եղաւ, որ նա այդպէս շուտով փոխեց իր միտքը, չեմ իմանում... Բօզա, սիրելիս, երևի դու նորան համոզեցիր... հա՛, հա՛... մի՛ ծածկիր ինձանից... իմ պատմութիւնը լսելով, երևի եկար նորա մօտ...

ՏԵՍԻԼ ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՈՒԼԵԱՆՑ, ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ՍՈՖԻԱ, ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ։

ԳՈՒԼԵԱՆՑ, մանելով աջ դռանից։

Երկար փնտռելու չը դառաւ... ինքն իրա ոտով էր գալիս... Սոֆիա, ահա քեզ քո Ջանումեանցը, բաղդաւոր եղէք...

ՍՈՖԻԱ, ամաչ վազելով։

Ստեփաննո...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, ամաչ գնալով։

Սոֆիա... (համբուրում է յետոյը։)

ՍՈՖԻԱ

Ո՞րքան երջանիկ եմ...

ԳՈՒԼԵԱՆՑ

Այո, սիրելիս, քո երջանկութիւնը ոչ մի բանի հետ չեմ փոխիլ...

ՍՈՖԻԱ, Ջանումեանցին։

Կատարուեցաւ մեր ցանկութիւնը...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Բաղդաւոր եմ և շատ բաղդաւոր...

ԳՈՒԼԵԱՆՑ

Ապա, պարոն դօքտոր, հիմի ինչ կը թողնեմ ձեզ, որ գնաք քոլերայ ջնջելու... (յանկարծ յիշելով։) Ա՜խ, ասած ունիմ և չեմ կատարում... քիչ մնաց մոռանում էի։ (դիմում է դէպի դուռը։) Գէորգ, Գէորգ։ (դուրս է գնում։)

ՍՈՖԻԱ, գգուելով Ջանումեանցին։

Ստեփաննոս, դու այժմ, սիրելիս, ի հարկէ չես գնալ քոլերայ ջնջելու համար...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Ե՞ս... ոչ... մենք հիմի կ'երթանք Եւրոպա... ինձ հարկաւոր է երկու տարի այնտեղ մնալ կատարելագործուելու մասնագիտութեանս մէջ... Իսկ յետոյ, Աստուած յաջողի, ուրիշ դէպքում չենք խնայել մեր ծառայութիւնը մեր արենակից եղբարց համար...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Դուք, պարոն Ջանումեանց, այժմ, նոցա դժբաղդութեան ժամանակ չէք ուզում գնալ... Ուրեմն, մնում է ինձ միայնակ գնալ...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ

Դուք ուզում էք գնա՞լ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Այո, պէտք է որ գնամ...

ՍՈՖԻԱ

Բօզա, սիրելիս, այժմ այնտեղ երկիւղալի է՝ քոլերայ կայ...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Ոչինչ... ինձ վիճակուել է կապել իմ անբաղդ կեանքը Հայաստանի դժբաղդութեան հետ...

ՍՈՖԻԱ և ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, միասին։

Այս ինչ է նշանակում...

ՕՐ. ԲԵՐՈՑԵԱՆՑ

Դուք երկուսդ բաղդաւոր էք, որ հասաք ձեր նպատակին, ես միայնակ մնացի... այստեղ ես ոչ ոքին էլ հարկաւոր չեմ... Կ'երթամ սփոփելու հի-

ւանդների տանջանքն ու կսկիծը... Պարոն Ջանումեանց, շնորհակալ եմ ձեզանից... բաղդաւոր եղէք...

ՋԱՆՈՒՄԵԱՆՑ, մի քիչ խաղաղելով, ելնում է իւր ճիչերը:

Հը՞մ, հը՞մ...

ՍՈՖԻԱ

Բօզա՛, դու մի գաղտնիք ունիս և մեզ չես յայտնում...

ՕՐ. ԲԵՐՈՅԵԱՆՑ

Այլ ևս հարկաւոր չէ քեզ, սիրելիս... Այս գաղտնիքն ես անբաղդս տանում եմ ինձ հետ դժբաղդ Հայաստան...

ԳՈՒԼԵԱՆՑ, մտնում է. նորա երեսին ծաւոն բերում է ափսեով շամպայն և բաժակներ:

Եկէք, ասածս կատարեմ, օրհնեմ ձեզ շամպայնով...

ՎԵՐՋ:

«Ազգային գրադարան»
NL0345990